

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան

Армянский государственный педагогический
университет имени Хачатура Абовяна

Khachatur Abovyan Armenian State Pedagogical University

ՀԱՏՈՒԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СПЕЦИАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN SPECIAL EDUCATION

Scientific Methodical Journal

2

ԵՐԵՎԱՆ-2014

Երաշխավորվել է տպագրության Խաչատուր Աբովյանի անվան
հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական
խորհրդի կողմից:

«Հատուկ կրթության հիմնախնդիրներ» պարբերականը միտված է նպաստելու Հայաստանի Հանրապետության բարձրագույն մանկավարժական և հատուկ կրթական համակարգի զարգացմանը: Պարբերականում զետեղված են գիտատեսական և գիտամեթոդական բնույթի հոդվածներ, որոնք կօժանդակեն ժամանակակից հատուկ մանկավարժության, հատուկ հոգեբանության հիմնախնդիրների լուսաբանմանը:

Գիտական պարբերականը նախատեսված է հատուկ մանկավարժների, հոգեբանների, բարձրագույն կրթության համակարգում աշխատողների, մագիստրոսների, հայցորդների, ասպիրանտների, նախադպրոցական, հատուկ և ներառական կրթություն իրականացնող հաստատությունների դաստիարակների և ուսցիչների, ինչպես նաև՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ծնողների համար:

ISSN 1829-4294

© Խաչատուր Աբովյանի անվան Հայկական
պետական մանկավարժական համալսարան, 2014

Մեր հասցեն՝ Երևան, Տիգրան Մեծ 17, հեռախոս (+374 10) 59 70 27
Էլեկտրոնային փոստ՝ spceduscience@mail.ru

Խմբագրական խորհրդի նախագահ՝

Միրզախանյան Ռուբեն

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գլխավոր խմբագիր՝

Ազարյան Ռոբերտ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Պատասխանատու քարտուղար՝

Ազատյան Թերեզա

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հատուկ կրթության ֆակուլտետի գիտության և հետբուհական կրթության գծով փոխդեկան, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Խմբագրական կոլեգիա՝

Աղավելյան Հովհաննես

Նովոսիբիրսկի “Մանկության ինստիտուտի” պրոֆեսոր, հոգեբանական գիտությունների դոկտոր

Ամարալ Իսաբել

Սետուբալի Ճարտարագիտական ինստիտուտի պրոֆեսոր, փիլիսոփայության դոկտոր, հաղորդակցման խանգարումների մասնագետ, կրթության խորհրդատու Պորտուգալիա

Ավագյան Արմենուհի

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հատուկ կրթության ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ավանեսյան Հրանտ	Երևանի պետական համալսարանի ընդհանուր հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գևորգյան Սրբուհի	Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ուսումնագիտական գծով պրոռեկտոր, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գյուլամիրյան Ջուլիետա	Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր, մանկավարժական գիտությունների դոկտոր
Գրիգորյան Ստեփան	Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի կինեզիոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր, բժշկական գիտությունների դոկտոր
Գրիցման Մագդալենա	Կվիժինի Երեխաների բուժման և վերականգնողական հանրային անկախ կենտրոնի ղեկավար, նյարդալոգոպեդ, հումանիտար գիտությունների դոկտոր, Լեհաստան
Կարապետյան Սիրանուշ	Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու, ՀՀ Առողջապահության նախարարության գլխավոր լոգոպեդ
Կուկուշկինա Օլգա	Մոսկվայի Շտրոգակյան մանկավարժության ինստիտուտի պրոֆեսոր, մանկավարժական գիտությունների դոկտոր, Ռուսաստանի կրթության ակադեմիայի թղթակից-անդամ

Մալլան Զաֆար	Դաղստանի պետական մանկավարժական համալսարանի շտկողական մանկավարժության և հատուկ հոգեբանության ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ռուսաստանի կրթության ակադեմիայի թղթակից-անդամ
Մալոֆեն Նիկոլայ	Մոսկվայի Շտկողական մանկավարժության ինստիտուտի տնօրեն, մանկավարժական գիտությունների դոկտոր, Ռուսաստանի կրթության ակադեմիայի ակադեմիկոս
Մելիք-Փաշայան Արմեն	Երևանի Մխիթար Հերացու անվան հայկական պետական բժշկական համալսարանի հոգեբուժության ամբիոնի վարիչ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Պայլոզյան Ժաննա	Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Պլակսինա Լյուբով	Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի հատուկ հոգեբանության բաժնի վարիչ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Սարգսյան Իննա	Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռուսաց լեզվի ամբիոնի պրոֆեսոր, մանկավարժական գիտությունների դոկտոր
Վիլպուլա Տուոմո	Օուլուի համալսարանի կրթության ֆակուլտետի դասախոս, ներառական կրթության գծով փորձագետ, փիլիսոփայության դոկտոր, Ֆինլանդիա

Председатель редакционного совета

Мирзаханян Рубен

Ректор Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна, доктор исторических наук, профессор

Главный редактор

Азарян Роберт

Заведующий кафедрой специальной педагогики и психологии Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна, доктор педагогических наук, профессор

Ответственный секретарь

Азатян Тереза

Заместитель декана по науке и поствузовскому образованию факультета специального образования Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна, кандидат педагогических наук, доцент

Редакционная коллегия

Агавелян Оганнес

Профессор Новосибирского “Института детства”, доктор психологических наук

Амарал Исабель

Профессор института политехнических дисциплин, доктор философии, специалист по коммуникативным нарушениям, консультант по образованию, Сетубал, Португалия

Авакян Арменуи

Декан факультета специального образования Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна, кандидат педагогических наук, доцент

Аванесян Грант

Заведующий кафедрой общей психологии Ереванского государственного университета, доктор психологических наук, профессор

Геворкян Србуи

Проректор по научно-учебной части Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна, доктор психологических наук, профессор

Гюламирян Джулиета

Профессор кафедры родного языка и методики ее преподавания Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна, доктор филологических наук

Григорян Степан	Профессор кафедры кинезиологии Армянского государственного инситута физической культуры, доктор медицинских наук
Грицман Магдалена	Председатель независимого общественного центра лечения и реабилитации детей, нейрологопед, доктор гуманистических наук Квидзын, Польша
Карапетян Сирануш	Доцент кафедры логопедии и восстановительной терапии Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна, кандидат педагогических наук, главный логопед Министерства здравоохранения РА
Кукушкина Ольга	Профессор Московского института коррекционной педагогики, доктор педагогических наук, член-корреспондент Российской академии образования
Маллаев Джафар	Заведующий кафедрой коррекционной педагогики и специальной психологии Дагестанского государственного педагогического университета, доктор педагогических наук, профессор, член-корреспондент Российской академии образования
Малофеев Николай	Директор Московского Института коррекционной педагогики, доктор педагогических наук, академик Российской академии образования
Мелик-Пашаян Армен	Заведующий кафедрой психиатрии Ереванского государственного медицинского университета имени Мхитара Гераци, доктор медицинских наук, профессор
Пайлозян Жанна	Заведующая кафедрой логопедии и восстановительной терапии Армянского государственного университета имени Хачатура Абовяна, кандидат педагогических наук, доцент
Плаксина Любовь	Заведующая отделением специальной психологии Московского государственного педагогического университета, доктор психологических наук, профессор
Саркисян Инна	Профессор кафедры русского языка Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна, доктор педагогических наук
Вилппола Туомо	Доктор философии, эксперт по инклюзивному образованию преподаватель факультета образования университета Оулу, Финляндия

Chairman of the Editorial Board

Mirzakhanyan Ruben

Rector of Khachatur Abovyan Armenian State Pedagogical University, Doctor of Historical Sciences, Professor

Editor in chief

Azaryan Robert

Head of the Chair of Special Education and Psychology Khachatur Abovyan Armenian State Pedagogical University, Doctor of Pedagogical Sciences, Professor

Responsible secretary

Azatyán Tereza

Vice-dean for graduate education and science of Special Education Faculty Khachatur Abovyan Armenian State Pedagogical University, Candidate of Pedagogical Sciences, Associate professor

Editorial board

Aghavelyan Hovhannes

Professor of the "Institute of Childhood" Doctor of Psychological Sciences, Novosibirsk

Amaral Isabel

Ph.D., Professor, Institute of polytechnics, Specialist in communicative disorders educational consultant. Setubal, Portugal

Avagyan Armenuhi

Dean of the Faculty of Special Education Khachatur Abovyan Armenian State Pedagogical University, Associate Professor, Candidate of Pedagogical Sciences

Avanesyan Hrant

Head of the Chair of General Psychology, Yerevan State University, Doctor of Psychological Sciences, Professor

Gevorgyan Srбуhi

Vice-rector of Scientific and Educational Affairs, Khachatur Abovyan Armenian State Pedagogical University, Doctor of Psychological Sciences, Professor

Gyulyamiryan Juliet	Professor of the Chair of the Native language and Methods of teaching, Khachatur Abovyan Armenian State Pedagogical University, Doctor of Philological Sciences
Grigoryan Stepan	Professor of the Chair of Kinesiology at Armenian State Institute of Physical Culture, Doctor of Medical Sciences
Gricman Magdalena	Head of the independent public center of treatment and rehabilitation of children, Neurospeech therapist, Doctor of humanity Poland, Kwidzyn
Karapetyan Siranush	Associate professor of the Chair of Speech and Rehabilitation therapy, Khachatur Abovyan Armenian State Pedagogical University, Candidate of Pedagogical Sciences, Chief Speech therapist Ministry of Health RA
Kukushkina Olga	Professor at the Institute of Correctional Pedagogy, Doctor of Pedagogical Sciences, Corresponding member of Russian academy of education
Mallaev Jafar	Head of the Chair of Correctional Pedagogy and Special Psychology Dagestan State Pedagogical University, Corresponding member of the Russian academy of education, Doctor of Pedagogical Sciences, Professor
Malofeev Nikolay	Director of Institute of Correctional Pedagogy, Doctor of Pedagogical Sciences, Academician of the Russian academy of education
Melik-Pashayan Armen	Head of the Chair of Psychiatry Mkhitar Heratsi Yerevan State Medical University, Doctor of Medical Sciences, Professor
Paylozyan Janna	Head of the Chair of Speech and Rehabilitation Therapy Khachatur Abovyan Armenian State Pedagogical University, Candidate of Pedagogical Sciences, Associate Professor

Plaksina Lubov

Head of the Department of Special Psychology of Moscow State Pedagogical University, Doctor of Psychological Sciences Professor

Sargsyan Inna

Professor at the Chair of the Russian language Khachatur Abovyan Armenian State Pedagogical University, Doctor of Pedagogical Sciences

Vilppola Tuomo

Ph.D., Lecturer, an expert on inclusive education at the Faculty of Education of the University of Oulu, Finland

ՆԱԽԱԲԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը մեր հանրապետության մանկավարժական մտքի և լավագույն ավանդույթների կրողն է, մանկավարժական կադրերի պատրաստման դարբնոցը և գիտամեթոդական կենտրոնը:

Համալսարանում մշտապես իրականացվում են կրթական բարեփոխումներ, մշակվում են հեռանկարային ծրագրեր, որոնք նպաստում են միջազգային ասպարեզում բուհի ճանաչմանն ու վարկանիշի բարձրացմանը:

Որպես կրթության և գիտության զարգացման կենտրոն, համալսարանի գործունեության գերակա ուղղություններն են՝ ներառումը համաշխարհային կրթական համակարգ, գիտական կապերի ընդլայնումը, կրթության որակի բարձրացումը և արդիականացումը:

Համալսարանի գերակա ուղղություններից է նաև հատուկ կրթության բովանդակության բարեփոխումը:

Կրթության և առողջապահության ոլորտներում վերջին տարիներին տեղի ունեցող բարեփոխումները որոշակի փոփոխություններ են ենթադրում նաև հատուկ կրթության ոլորտում: 2011թվականի դեկտեմբերին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում հիմնադրվեց հատուկ կրթության ֆակուլտետը: Համոզված ենք, որ Հայաստանի Հանրապետությունում

գիտամանկավարժական այս կարևոր ինստիտուտի ձևավորումը կնպաստի մանկավարժական արդի հիմնախնդիրների արդյունավետ լուծմանը: Հատուկ կրթության ոլորտում իրականացվող ուսումնասիրությունները պահանջում են նոր լուծումներ, մասնավորապես պայմանավորված հանրակրթության ոլորտում ներառական կրթության ներդրմամբ:

Սույն գիտամեթոդական հանդեսը լուսաբանում է հատուկ կրթության և հարակից ոլորտների արդի հիմնախնդիրները ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում:

Պարբերականում լուսաբանվում են զարգացման խանգարումների մանկավարժական, հոգեբանական, բժշկական, մարզաառողջարարական և սոցիալական հիմնահարցեր, առաջարկվում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց հետ տարվող աշխատանքի ժամանակակից մոտեցումներ, որոնք հիմնականում հեղինակների հետազոտությունների և վերլուծությունների արդյունք են:

**ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆԻ
ԱՆՎԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐՇԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ,
ՊԱՏՄԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ,
ՊՐՈՖԵՍՈՐ
ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ**

ПРЕДИСЛОВИЕ

Армянский государственный педагогический университет имени Хачатура Абовяна является носителем педагогической мысли и наилучших традиций, научно-методическим центром по подготовке педагогических кадров в нашей республике.

В университете осуществляются образовательные реформы, разрабатываются инновационные программы, которые способствуют повышению рейтинга вуза и его признанию на мировом уровне.

Основными направлениями университета, как центра развития образования и науки являются: интеграция в международное образовательное пространство, расширение научных связей, повышение качества образования и модернизация.

Реформирование содержания специального образования также является одним из основных направлений университета.

Происходящие в последние годы реформы в области образования и медицины предполагают некоторые изменения и в сфере специального образования. В декабре 2011 года в Армянском государственном педагогическом университете был основан факультет специального образования. Мы уверены, что формирование этого главно-

го научно-педагогического института в Республике Армения будет способствовать продуктивному решению педагогических проблем. Исследования в сфере специального образования требуют новых решений, обусловленных, в частности, внедрением инклюзивного образования в общеобразовательную среду.

В данном научно-методическом сборнике поднимаются и рассматриваются проблемы специального образования и смежных сфер, имеющие место как в Армении, так и за рубежом.

В сборнике освещаются проблемы педагогического, психологического, медицинского, спортивно-оздоровительного и социального характера, связанные с нарушениями развития, представлены являющиеся результатом исследований авторов современные подходы к работе с лицами, имеющими особые образовательные потребности.

**РЕКТОР АРМЯНСКОГО
ГОСУДАРСТВЕННОГО ПЕДАГОГИЧЕСКОГО
УНИВЕРСИТЕТА
ИМЕНИ ХАЧАТУРА АБОВЯНА,
ДОКТОР ИСТОРИЧЕСКИХ НАУК,
ПРОФЕССОР**

РУБЕН МИРЗАХАНИЯН

PREFACE

Khachatur Abovyan Armenian state pedagogical university of is the carrier of pedagogical thought and the best tradition in our republic, the scientific and methodical center for preparation of pedagogical personnel.

The university implemented educational reforms developed innovative programs which promote increase university rating and recognition in the world.

As the center of a development of education and science the main direction of university are: integration into the international educational system, expansion of scientific communications, improvement of quality of education and modernization. Reforming the content of special education is also a major focus of the university.

In recent years, on-going reforms in the education and medicine suggest some changes in the field of special education. In December 2011, at the Armenian State Pedagogical University was founded Faculty of Special education. We are sure that formation of this

main scientific and pedagogical institute in the Republic of Armenia, promotes the productive solution of pedagogical problems. Research in the field of special education require new solutions, in particular, due to the implementation of inclusive education in schools.

This scientific and methodical collection highlights the problem of special education and related areas, both in Armenia and abroad.

This volume presents pedagogical, psychological, medical, sports and health recovery and social problems of developmental disorders, presents modern approaches to work with persons with special educational needs, which generally are result of researches of authors.

**RECTOR OF KHACHATUR
ABOVYAN ARMENIAN STATE
PEDAGOGICAL UNIVERSITY
DOCTOR OF HISTORICAL
SCIENCES, PROFESSOR**

RUBEN MIRZAKHANYAN

**ՄԱՆԿԱԿԱՆ ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԱԹՎԱԾ ՈՒՆԵՑՈՂ
ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
ՀԻՊՈԹԵՐԱՊԻԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ
ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՁԵՎԵՐԸ**

Թ.Յու. Ազարյան

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պեդագոգական մանկավարժական համալսարանի հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու

Մ. Ա. Փարսադանյան

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պեդագոգական մանկավարժական համալսարանի հատուկ կրթության ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի

Հանգուցային բառեր և արտահայտություններ. մանկական ուղեղային կաթված, կենտոնական նյարդային համակարգ, հիպոթերապիա, վերականգնում, հարմարվողականություն:

Մանկական ուղեղային կաթվածը (ՄՈՒԿ) կենտրոնական նյարդային համակարգի հիվանդություն է, որի ժամանակ ախտահարվում են գլխուղեղի շարժողական գոտիները և շարժումն իրականացնող ուղիները: Ախտահարվում է նաև կամային և ոչ կամային շարժումները կարգավորող մեխանիզմների փոխազդեցությունը: Մկանային կառավարման նման խանգարումը դժվարություններ է առաջացնում շարժման և մարմնին որոշակի դիրքի ժամանակ: Առաջին անգամ մանկական ուղեղային կաթվածի կլինիկական նկարագրությունը տվել է Վ. Լիտտլը 1853թ., իսկ Ջ. Ֆրոյդին պատկանում է ման-

կական ուղեղային կաթված եզրույթը:¹

Մանկական ուղեղային կաթվածի հիմնական կլինիկական ախտանշան է շարժողական ֆունկցիայի խանգարումն է, որը կապված է զարգացման հապաղումով և ստատոկինետիկ սխալ զարգացումով, տոնուսի պաթոլոգիայի, թերլուծանքով: Բացի կենտրոնական նյարդային համակարգում տեղ գտած խանգարումներից կյանքի ընթացքում նյարդային և մկանային հյուսվածքներում, հողերում, կապերում, կրճիկներում առաջանում են նաև երկրորդային փոփոխություններ: Մանկական ուղեղային կաթվածի հիմնական ախտանշանին՝ շարժողական խանգարումներին

1 Стребелева Е. А., Венгер А. Л., Екжанова Е.А. и др., Специальная дошкольная педагогика, М.: Издательский центр «Академия», 2002., 94с.

շատ դեպքերում ավելանում են հոգեկանի, խոսքի, տեսողության, լսողության և այլ խանգարումներ: Շատ երեխաների մեջ դիտվում է նաև ցնցումային համախտանիշ:

Մի շարք հետազոտողների տեսությունների համաձայն՝ մանկական ուղեղային կաթվածի առաջացման համար վճռական դեր ունեն պրենատալ զարգացման գործոնները (37-60%) դեպքերում, նատալ գործոնների բաժինը (27-40%), իսկ պոսնատալը (3-25%), մինչդեռ որոշ հեղինակներ առանձնապես մեծ նշանակություն չեն տալիս մանկական ուղեղային կաթվածի էթիոլոգիայում: Ավելի մեծ նշանակություն են տալիս բարդություններով պայմանավորված ծննդյան գործոններին:

Վերը նշված պատճառներն ընդհանուր առմամբ, վերաբերվում են մանկական ուղեղային կաթվածին իսկ ավելի մանրակրկիտ դիտարկում կարելի է կատարել մանկական ուղեղային կաթվածի տարբեր ձևերի ուսումնասիրման ժամանակ, դրանք առանձնացվում են շարժողական տարբեր դիսֆունկցիաների համաձայն:

Համարվում է, որ մանկական ուղեղային կաթված ունեցող երեխաների 25-35%-ի ինտելեկտը պահպանված վիճակում է, սակայն անբավարար պայմաններն իր ազդեցությունն են թողնում նրանց հոգեկան գործընթացի զարգացման վրա: Մանկական ուղեղային կաթվածով երեխաների բոլոր իմացական գործընթացներն ունեն որոշ առանձնահատկություններ. ակտիվ կամաձին ուշադրության խանգարում, ինչը բացասաբար է անրադառնում երեխայի ողջ

հոգեկանի գործունեության վրա, քանի որ ընկալման խանգարումները հանգեցնում են ուշադրության խանգարման, բոլոր հոգեկան գործառույթների արագ հյուժվածություն, արտահայտվում է ցածր մտավոր աշխատունակությամբ, ուշադրության, ընկալման, հիշողության, մտածողության խանգարումներով, հուզական լաբիլությամբ: Մտավոր ծանրաբեռնվածության դեպքում արտահայտվում են նյարդային երկրորդային բարդացումներ: Երբեմն հոգեկանի ցայտուն հյուժվածությունը և հոգնածությունը նպաստում են անձի ախտաբանական զարգացմանը՝ առաջացնելով է երկչոտություն, վախեր, տրամադրության անկում և այլն:

Մանկական ուղեղային կաթվածի վերականգնման արդյունավետությանը նպաստող օժանդակ միջոցներից է հիպոթերապիան: Հիպոթերապիայի իրականացման ժամանակ ձիերին նախապես վարժեցնում են: Թերապիայից առաջ կենդանուն հետազոտում են հատուկ սարքավորումներով: Ընդ որում՝ նրանք պետք է լինեն ոչ ագրեսիվ և հեշտ կառավարելի:

Որպես հոգեբանական թերապիայի տարատեսակը հանդիսացող հիպոթերապիայի անցկացման ժամանակ ևս կիրառվում են մի շարք մեթոդներ, այցելուի և թերապևտի միջև զրույց է կազմակերպվում, պատմում են զվարճալի պատմություններ կենդանիների մասին (ձիու), կենդանակերպ տիկնիկներով ներկայացվում են տիկնիկային բեմադրություններ և զբոսանքներ:

Անգլիացի հոգեբան Հ. Ֆայնը գտնում է, որ կենդանիների մասին

պատմությունները դրական ազդեցություն են թողնում երեխային հոգեվիճակի վրա: Նրանք լսելով այդ պատմություններ՝ կտրվում են արտաքին աշխարհից, մոռանում իրենց անհանգստացնող ցավն ու երևույթները: Այնուհետև սկսվում են այդ պատմության հերոսների արաքների ակտիվ քննարկումներ, ներկայացվում են իրենց տեսակետները: Այսինքն մոտ տվյալ դեպքում ենթագիտակցորեն ձևավորվում է երեխաների ինքնավստահությունը:²

Հիպոթերապիայի կիրառման հիմնական ուղղություններն են՝

- Շարժողական գործառույթի խանգարման վերականգնումը նյարդային համակարգի ցանկացած մակարդակում (կաթված, ուշադրության կենտրոնացման խանգարում): Վնասվածքաբանության մեջ՝ ողնաշարի առանցքի և ողնաշարի գործառույթի այլ դեֆորմացիաներ:
- Մանկավարժական միջամտություն: Ձիախաղն ու ձիավարումը կիրառվում է նախադպրոցական ու դպրոցահասակ երեխաների վարքի խանգարման դեպքում, ինչպես նաև ինտելեկտի զարգացման նպատակով:
- Հաշմանդամների սպորտային գործունեությունը, որն օգնում է նրանց վերականգնվել և միշտ բարձր մակարդակի վրա պահել իրենց ֆիզիկական ակտիվությունը:
- Ձին՝ որպես կենդանի մարգասառք: Կենտրոնական նյարդային

համակարգի խանգարումով հիվանդների համար հիպոթերապիան կիրառվում է որպես բուժիչ-մարմնամարզություն:

- Հետվիրահատական ժամանակահատվածում հիվանդների վերականգնում, ինչպես նաև նրանց վերջույթներում արյան շրջանառության կարգավորումը,
 - Հոգեամառիկ շեղումներով երեխաների վերականգնում (նևրոզ, փսիխոզ, շարժումների զարգացման հապաղում): [3]
- ՄՈՒԿ-ով երեխաների հետ, հիպոթերապիայի իրականացումը՝
- նվազեցնում է վախի ու տագնապի զգացողությունը,
 - զարգացնում է երեխայի ինքնասպասարկման ունակությունը,
 - օգնում է երեխային շփման և հասարակության մեջ հարմարվելու հարցում:

Հիպոթերապիայի գլխավոր առանձնահատկությունն այն է, որ այն կազմակերպվում է բնության, այլ ոչ թե փակ տարածության մեջ: Ձիերը երեխայի գիտակցության մեջ ստեղծում են լրացուցիչ դրդապատճառություն, օգնում են հաղթահարելու վախերը, ու առաջացնում ձիու վրա նստելու և ձիավարելու ցանկություն: Այս ամենն ավելի դյուրին է դարձնում հասակակիցների հետ շփումը: Ձիու խնամքով զբաղվելու ժամանակ ձևավորվում ենք երեխայի պարտավորվածության ու պատասխանատվության զգացումները: Եթե երեխան ունի գլխուղեղի հետ կապված որևէ խանգարում, ապա պարզ և անընդհատ կրկնվող շարժումները նրան ընձեռում են ձիու խնամելով զբաղվելու հնարավորություն՝ ներգրավե-

2 Aubery H. Fine, *Animalassisted therapy*, 1999, 203p.

լով հասարակության մեջ, իր համար ստեղծելով նոր մասնագիտություն: Այդպիսով երեխան իրեն զգում է իբրև հասարակությանը պիտանի անձնավորություն: Հիպոթերապիան նաև շատ դրական է ազդում բացարձակ առողջ երեխաների գիտակցության զարգացման վրա: Ցանկացած երեխայի մոտ առաջանում է վախ, երբ իր առջև տեսնում է այդ ահռելի կենդանուն: Այդ վախն օգնում են հաղթահարել դժվարությունները այն երեխաներին, ովքեր անցնում են վերականգնողական թերապիա: Այս պարագայում երեխայի մեջ առաջանում է առաջինը լինելու բնազդը, նա դառնում է ավելի խիզախ, երբ տեսնում է, թե ինչպես է հիվանդ երեխան կարողանում կառավարել այդ հսկա կենդանուն: Նրանք՝ ամենալավը լինելու ցանկությունն օգնում է հաղթահարելու բոլոր վախերը:

Խումբը, որում իրականացվում է թերապիան, բաղկացած է երեք հոգուց՝ ինքը՝ այցելուներ, հրահանգիչը և ձիավարը, ով գործում է ըստ հրահանգիչի կարգադրությունների: Վերջինս էլ, իր հերթին, ապահովության համար միշտ գտնվում է ձիու կողքին (նույնիսկ եթե հեծյալը ինքնուրույն է ձիավարում):[4]

Թերապևտիկ ձիավարությունը կարելի է բաժանել երեք մակարդակի՝ պայմանավորված ծանրաբեռնվածությամբ և նրանով, թե ինչ վիճակում է գտնվում երեխան:

Ավելի ծանր վիճակում գտնվող երեխաների համար կիրառվում է հիպոթերապիան: Երեխան երբեմն նստում է ձիու վրա՝ առանց թամբի: Թերապիան իրականացվում է մարդու(36,6°C) և ձիու(37,5-38,5°C)

մարմինների ջերմաստիճանների փոխազդեցության միջոցով, ինչպես նաև ձիու մարմնի ռիթմիկ տատանումներով:

Ավելի թեթև վիճակում գտնվողների դեպքում հիպոթերապիան կիրառում են միայն զարգացնող աշխատանքների սկզբնական փուլում, իսկ հետո սկսում են սովորել ինքնուրույն ձիավարելու կանոնները:

Երրորդ մակարդակը՝ ռայթերապիան է: Այն իրենից ներկայացնում է ձիարշավ, որտեղ ակտիվ ներգրավված են երեխաները: Լավ արդյունքների դեպքում նրանք կարող են մասնակցել մրցույթների և պարապել հատուկ ծրագրով:

Կա նաև այսպես կոչված թերապևտիկ ձիարշավ, որի հիմնական այցելուները մտավոր հետամնացություն ունեցող ու դժվար դաստիարակվող դեռահասներն են:

Ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ մանկական ուղեղային կաթված ունեցող երեխաների դեպքում հիպոթերապիան նվազեցնում է վախի ու տագնապի զգացողությունը, հանում է նյարդային համակարգի լարվածությունը, նպաստում է այս երեխաների բարձր ինքնագնահատականի ձևավորմանը, հասարակության մեջ նրանց հարմարեցմանը:

Այսպիսով, հիպոթերապիան մանկական ուղեղային կաթված ունեցող երեխաների համար ստեղծում է վերականգնման և սոցիալականացման լայն հնարավորություններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Стребелева Е. А., Венгер А. Л., Екжанова Е.А. и др. Специальная дошкольная педагогика: М.: Издательский центр «Академия», 2002.
2. Aubery Н. Fine- Animalassisted therapy, 1999.
3. <http://ppoterapia.kharkov.ua/poleznaya-informatsiya/16-osnovnyenapravleniya-ispolzovaniya-ippoterapii>
4. http://ksk-rennaissance.ru/?page_id=2310

РЕЗЮМЕ

ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ И ФОРМЫ ПРОВЕДЕНИЯ ИППОТЕРАПИИ С ДОШКОЛЬНИКАМИ С ДЕТСКИМ ЦЕРЕБРАЛЬНЫМ ПАРАЛИЧОМ

Т. Ю. АЗАТЯН

доцент кафедры специальной педагогики и психологии Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна, кандидат педагогических наук

М. А. ПАРСАДАНЯН

магистр II курса факультета специального образования Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна

В статье представлены основные проявления детского церебрально-го паралича (ДЦП), выявлены основные сопутствующие факторы, дана психолого-педагогическая характеристика этих детей. Выявлена эффективность проведения иппотерапии,

как средства коррекции детей с ДЦП. В ходе исследования становится ясным, что иппотерапия снижает чувства страха и тревожности, расслабляет нервную систему, способствует формированию самооценки у этих детей.

SUMMARY³

THE MAIN DIRECTIONS AND FORMS OF CARRYING OUT HIPPO THERAPY WITH PRE-SCHOOL CHILDREN WITH CEREBRAL PALSY

T. Yu. Azatyan

*Associate professor at the Chair of Special Pedagogy and Psychology
Khachatur Abovyan Armenian State Pedagogical University, Candidate of
Pedagogical Sciences*

M.A.Parsadanyan

*Second course Master degree student, Special education faculty Khacatur Abovyan
Armenian State Pedagogical University*

In article are presented the main manifestations of the children's cerebral palsy (CCP), the major contributing factors are revealed, is given the psychopedagogical characteristic of these children Revealed efficiency of hippotherapy as correction tool for

children with cerebral palsy. During the research it becomes clear that hippotherapy reduces sensation of fear and uneasiness, weakens of nervous system, promotes formation of a self-assessment of these children.

3 «Հատուկ կրթության հիմնախնդիրներ» գիտամեթոդական հանդեսի հոդվածների ամփոփումները անգլերեն լեզվով թարգմանել է հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դասախոս Լիլիթ Ասոյանը

ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Ռ. Ն. Ազարյան

Խաչապուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հապուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մ. Կ. Մարության

Խաչապուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հապուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու

Հանգուցային բառեր և արտահայտություններ. թույ տեսնող երեխաներ, կույրեր, մնացորդային տեսողություն, դասակարգում, հաշմանդամներ, տեսողության սրություն, տեսողական ընկալում:

Տեսողության խանգարումներ ունեցող երեխաների որակյալ կրթադաստիարակչական գործընթացի պայմաններից մեկը մասնագետների կողմից յուրաքանչյուր երեխայի տեսողական գործառնությունների առանձնահատկությունների ճիշտ ընկալումն ու դրանց հաշվառումն է հոգեբանամանկավարժական ներազդեցության բոլոր ձևերի համակարգում: Սակայն այս հարցում տիֆլոմանկավարժական գրականությունում առկա է մի շարք անհամաձայնություններ և խառնաշփոթ: Վերջինս տիֆլոմանկավարժական պրակտիկայում առաջացնում է որոշակի դժվարություններ:

Առաջին հերթին կցանկանայինք որոշակի պարզություն մտցնել կույրեր և չտեսնողներ եզրա-

բառերի մեկնաբանություններում, քանի որ վերջին տարիներին մի շարք փաստաթղթերում առավել հաճախ ենք «կույր» տերմինը փոխարինում «չտեսնողով»։ Նշված բառերը կիրառվում են որպես նույնիմաստներ: Մենք նույնպես մեր հրատարակումներում վերջին 5-7 տարիների ընթացքում, հետևելով այս ուղղությանը, նշված եզրաբառերը կիրառում ենք որպես հոմանիշներ: Սակայն խոստովանենք, որ կույրերին սկսեցին անվանել չտեսնողներ, որպեսզի մեղմացնեն (ինչպես շատերին թվում է կոպիտ) կույր բառը այն առավել փափուկ չտեսնող բառով: Իրականում այս բառերի կիրառումը որպես համազոր, նույնպես հանգեցնում է որոշակի անճշտությունների: Այսպես, մի շարք երկրներում գործող կույրերի միավորումներում /Ռուսաստան, Հայաստան, Բելորուսիա, Լեհաստան և այլն/ արդարացիորեն չտեսնող են անվանում բոլոր I և II կարգի տեսողություն ունեցող հաշմանդամներին: Քանի

որ II կարգի տեսողությամբ հաշմանդամները պատկանում են «թույլ տեսնողներ» խմբին և նրանց չպետք է դասել չտեսնողների խմբին, քանի որ նրանք իրականում տեսնող չեն համարվում:

Հաջորդ կարևոր հիմնախնդիրը տեսողության խանգարումներ ունեցող երեխաների ճիշտ դասակարկումն է ըստ խմբերի. «Կույր երեխաներ», «մնացորդային տեսողությամբ կույրեր», «թույլ տեսնող երեխաներ»: Մի շարք հեղինակներ, կույր երեխաներ ասելով հասկանում են ոչ միայն տոտալ կույրերին, այլև կույրերին, ովքեր ունեն մնացորդային տեսողություն: Այնինչ այն կույրին, ով ունի առարկայական տեսողություն և նրան, ով ունի գունաընկալում, պետք է ուսուցանել տեսողական հնարավորությունների կիրառման տարբեր սոցիալ-հարմարողական միջոցներով. դրանք այս խմբերի երեխաների մեջ բացարձակ տարբեր են:

Այսպես, տեսողության խանգարման աստիճանով և տեսողության հնարավորություններով պայմանավորված՝ երեխաների խմբերը շատ տարբեր են և ոչ միօրինակ: Ըստ տեսողության խանգարման աստիճանի՝ ձևավորված են հետևյալ ենթախմբերը. Կույրեր, թույլ տեսնողներ և իջեցված տեսողությամբ երեխաներ:

Կույր երեխաների տեսողության սրությունը կազմում է 0-ից 0,04 (4%) լավ տեսնող աչքում շտկողական ապակիներով: Ի դեպ 0 տեսողություն ունեցող կույրերը բացարձակ(տոտալ) կույրերն են, իսկ լավ տեսնող աչքի շտկողական ապակիներով 0,04 տեսողության սրու-

թյամբ երեխաները՝ մնացորդային տեսողությամբ կույրերն են: Կույրեր ենթախմբի մեջ են մտնում նաև ավելի բարձր տեսողության սրությամբ երեխաները (մինչև 1միավոր, այսինքն՝ ունեն 100% տեսողություն): Այս երեխաների տեսադաշտը նեղացած է մինչև 10-15 աստիճան կամ մինչև ֆիքսացիայի կետը: Նրանք համարվում են պրակտիկորեն չտեսնողներ, քանի որ ճանաչողական գործունեության և տարածական կողմնորոշման ընթացքում գործնականում շատ սահմանափակ են օգտագործում իրենց տեսողությունը: Հետևաբար, կենտրոնական տեսողության սրությունը կուրության միակ չափանիշը չի կարելի համարել:

Նշենք, որ օֆտալմոլոգիական և տիֆլոմանկավարժական մի շարք աշխատություններում մնացորդային տեսողությամբ կույրերի խմբին են դասում նաև բոլոր նրանց, ում տեսողությունն ամբողջությամբ բացակայում է: Մնացորդային տեսողությունը բնութագրվում է տեսողական գործառույթների խանգարման տարաբնույթ դրսևորումներով՝ ցուցանիշների փոփոխությամբ և անկայունությամբ, տեսողության հոգնածության գործակցի բարձրացմամբ: Այս հանգամանքը չի տալիս երեխաներին լիարժեք զարգացման հնարավորություն. Տեսողության այդ մակարդակը բավարար չէ կատարելու այն աշխատանքները, որոնք պահանջում են տեսողության պարբերաբար մասնակցություն: Մնացորդային տեսողությամբ մի շարք երեխաներ կարող են ոչ երկարատև ժամանակում կարդալ մեծ տառաչափով նյութ, իսկ միայն

հարթ գրված տառաչափը նրանց չի տա ստանալու լիարժեք կրթության հնարավորություն: Այդ պատճառով մնացորդային տեսողություն ունեցող կույրերը, ինչպես նաև բոլոր այն երեխաները, ովքեր պատկանում են <<կույրեր>> խմբին, ճանաչողական գործունեության ժամանակ պետք է առաջին հերթին հենվեն պահպանված զգայարանների վրա (շոշափելիք, լսողություն և այլն): Այս դեպքում նրանց տեսողությունը պետք է ունենա օժանդակ դեր:

Հաշվի առնելով վերը նշվածը, ինչպես նաև այն, որ կույրերի հիմնական տեսողական գործառույթների (տեսողության սրություն, տեսադաշտը, գունաընկալում, լուսաընկալում) խանգարման աստիճանը առավել կտրուկ է արտահայտված մենք առաջարկում ենք ուսուցման, դաստիարակության, զարգացման և հարմարեցման տիֆլոմանկավարժական պրակտիկայում կույր երեխաներին ըստ տեսողության սրության խանգարման աստիճանի դասակարգել հետևյալ խմբերում.

1. Տոտալ կամ բացարձակ կույրեր: Այս դեպքում բացարձակապես բացակայում են տեսողական զգայությունները:

2. Կույրեր, ովքեր ունեն լուսազգացողություն: Այս երեխաները տեսնում են միայն լույսը, այսինքն՝ տարբերակում են լույսը մթից: Ի դեպ, այն երեխաները, որոնց լուսազգացողությունը ճիշտ պրոեկցիայով է, կարող են ճշտորեն ցույց տալ լույսի ուղղությունը, իսկ այն երեխաները, որոնց լուսազգացողությունը սխալ պրոեկցիայով, է չեն կարող ասել, թե որ կողմից է ընկնում այն:

3. Կույրեր, ովքեր ունեն լուսազգացողություն և գունազգացողություն: Այս երեխաները տարբերակում են ոչ միայն լույսը ստվերից, այլ նաև՝ գույները միմյանցից:

4. Կույրեր, ովքեր ունեն նորմալ տեսողության սրության հազարերորդական մաս (մոտավորապես 0,005 ից մինչև 0,009): Այս տեսողության դեպքում նրանք կարող են տեսնել դեմքի առջև կատարված ձեռքի շարժումը, իսկ շատ մոտ տարածության վրա կտարբերեն գույները, առարկաների ուրվագծեր: Բժշկական փաստաթղթերում այսպիսի տեսողության սրությունը նշվում է 0,005 կամ ձեռքի շարժումը դեմքի առջև:

5. Կույրեր մնացորդային պատկերավոր (առարկայական) տեսողությամբ, այսինքն՝ երեխաներ, ովքեր ունեն պատկերավոր կամ առարկայական տեսողություն: Այս խմբի երեխաների տեսողության սրությունը տատանվում է 0,01-ից -0,04-ի սահմաններում: Տիֆլոգրականության մեջ, նախկինում նրանց անվանում էին մասնակի տեսողություն [4,6,5 և ուրիշներ]: Ներկայումս <<մնացորդային տեսողությամբ կույրեր>> եզրույթն ավելի շատ տարածում է գտնում տիֆլոլոգիայում, քանի որ այն առավել հստակորեն է ցույց տալիս նրանց տեսողական հնարավորությունները:

Պետք է ընդգծել, որ մեր կարծիքով բերված դասակարգումը առավել տրամաբանական է և հարմար խորը տեսողության խանգարումներ ունեցող երեխաների ուսուցման և վերականգնման պրակտիկայում: Այս դասակարգումը հստակորեն

արտացոլում է յուրաքանչյուր խմբի երեխայի տեսողական օրգանի ախտահարման խորությունը, ինչը կարևոր է կրթական և վերականգնողական գործընթացներում անհատական-տարբերակված մոտեցման իրականացման համար:

Այսպես, օրինակ, լուսաընկալում ունեցող կույր երեխային (2 խումբ) տարածության մեջ ճիշտ պրոեկցիայով, ինքուրույն կողմնորոշվելու համար պետք է սովորեցնել կիրառել տեսողության այդ առանձնահատկությունը: Այսպիսի տեսողությամբ կարելի է առանց դժվարության սովորել, օրինակ օրվա լուսավոր ժամերին գտնել միջանցքի դուռը՝ շարժվելով պատի կողքով՝ լույսի և մթի հաջորդականությամբ (համապատասխանաբար զգալով պատուհանները և նրանց միջև ընկած պատը): Եթե կույրը տեսնում է ոչ միայն լույսը, այլև գունաընկալումը (3 խումբ), ապա նրան անհրաժեշտ է սովորեցնել տարբերակել ինչպես գույների տարբեր երանգները (բաց և մուգ), այնպես էլ և գույները՝ տարածական կողմնորոշման համար օգտագործել տեսողական այդ հնարավորությունը: Օրինակ, փողոցում տեսնելով միայն կանաչ և մոխրագույն գույները՝ նա կարող է ձեռք բերել խոտածածկ տարածքը մայթից տարբերելու ունակություն:

Թույլ տեսողություն ունեցող երեխաների տեսողության սրությունը 0,05-ից (5%) մինչև 0,4 (40%) սահմանում է լավ տեսնող աչքում շտկողական ապակիներով:

Ըստ տեսողության սրության խանգարման աստիճանի՝ «Թույլ տեսնող երեխաներին» նպատա-

կահարմար է բաժանել հետևյալ խմբերի.

1. Թույլ տեսնող երեխաներ, որոնց տեսողության սրությունը տատանվում է 0,05-0,09-ի սահմաններում լավ տեսնող աչքում շտկողական ապակիներով:

2. Թույլ տեսնող երեխաներ, որոնց տեսողության սրությունը տատանվում է 0,1-0,2-ի սահմաններում լավ տեսնող աչքում շտկողական ապակիներով:

3. Թույլ տեսնող երեխաներ, որոնց տեսողության սրությունը տատանվում է 0,3-0,4-ի սահմաններում լավ տեսնող աչքում շտկողական ապակիներով:

Թույլ տեսնող երեխաների (տեսողության սրությունը 0,05-0,09) մեջ, որպես կանոն, նկատվում են տեսողական գործառույթների բարդ խանգարումներ: Տեսողության սրության իջեցման հետ մեկտեղ նեղացած է լինում նրանց տեսադաշտը, տարածական տեսողությունը: Այս ամենը դժվարեցնում է շրջական միջավայրի, ուսումնական նյութի տեսողական ընկալումը: Նրանց հետ պիտի կազմակերպել ոչ լիարժեք տեսողության պահպանման և ռացիոնալ կիրառման ուղղությամբ միջոցառումներ: Այս երեխաների ուսուցման գործընթացում անհրաժեշտ է լայնորեն կիրառել հատուկ և օպտիկական միջոցների համակարգ (տարբեր խոշորացույցներ, հեռադիտակներ և այլն) և հենվել պահպանված զգայարանների հնարավորությունների վրա՝ խանգարված և թերզարգացած տեսողական գործառույթների շտկման և փոխհատուցման նպատակով:

Այս խմբի երեխաների տեսողու-

թյունն այնքան էլ կայուն չէ և անբարենպաստ պայմանների դեպքում այն վատանում է: Այդ պատճառով էլ ուսումնական և շտկողագարգացնող գործընթացներում այս երեխաները պահանջում են մանկավարժի մեծ ուշադրություն. նստեցնել առաջին նստարանին, հետևել լուսավորության հարմարավետությանը, դիզակտիկ նյութերը մշակել հակադիր գունային երանգներով՝ դրանք հնարավորին նախատեսելով անհատական կիրառման համար: Այս խմբի երեխաներից շատերին (հատկապես առաջնային հիվանդություններ ունեցողներ, որոնք բերում են կուրության) անհրաժեշտ է զուգահեռաբար սովորեցնել Բրայլյան համակարգը:

Թույլ տեսնող երկրորդ (տեսողության սրություն 0,1-ից մինչև 0,2), ինչպես նաև առաջին խմբի երեխաները, պայմանավորված իրենց տեսողության մակարդակով, համարվում են հաշմանդամներ, սակայն նրանց տեսողության սրությունն ավելի բարձր է: Այդ պատճառով տիֆլոլոգիայի ոլորտի մի շարք մասնագիտական աղբյուրներում մինչև 0,2 տեսողությունը (Ա.Գ.Լիտվակ, Բ.Կ.Տուպոնոգով և ուրիշներ) բնորոշվում է որպես «բժշկական թույլ տեսողություն»։ Տեսողության գործառույթներով պայմանավորված այս երեխաների մեջ կան երեխաներ, ովքեր մանկավարժների ուշադրության կարիք ունեն: Այսպես, եթե երեխայի մեջ առկա է տեսողական պաթոլոգիայի այնպիսի կլինիկական ձևերի համադրություն, ինչպիսին է բարձր աստիճանի հեռատեսությունը, տեսողական նյարդի մասնակի ատրոֆիան՝ տեսադաշտի կոնցենտրիկ

նեղացումով և դրա հետ մեկտեղ՝ լուսավախություն, ապա այս դեպքում ուսումնական և կենցաղային գործունեության շատ ձևեր, որոնք պայմանավորված են վատ տեսողությամբ, առաջացնում են դժվարություններ: Այսպես, գրելիս և կարդալիս ծայրամասային տեսողության խանգարման հետևանքով վատ տեսնող երեխան կարիք ունի աշխատանքային սեղանի լավ լուսավորության: Լույսը ոչ մի դեպքում չպետք է ընկնի աչքերին: Բացի այդ այս երեխաներին անհրաժեշտ է մոտ տարածությունը տեսնուլու ակնոցներ, իսկ տեղաշարժման և գրատախտակից օգտվելու համար՝ հեռուն նայելու ակնոցներ:

Երրորդ խմբի մեջ ընդգրկված թույլ տեսնող երեխաները (տեսողության սրությունը 0,3-ից 0,4) մեր հանրապետությունում, ինչպես նաև մի շարք այլ երկրներում հաշմանդամ չեն համարվում, թեև նրանց արդյունավետ ուսուցման, դաստիարակման և զարգացման համար անհրաժեշտ է պահպանել որոշակի օֆտալմոհիզիկական առաջարկներ և պահանջներ, կիրառել հատուկ տեխնիկական միջոցներ և մեթոդներ: Հենց այդ պատճառով էլ լուսավորության նախարարությունը 1974 թվականի հրամանի համաձայն թույլ տեսնող երեխաների հատուկ հանրակրթական հաստատություններ են ընդունվում այն երեխաները, որոնց տեսողության սրությունը մինչև 0,4-ն է: Սա մեր դասակարգման վերին սահմանն է, այն համապատասխանում է մանկական հաշմանդամության ընդունման միջազգային չափանիշներին: Այդ առումով, չնայած նրան, որ տեսողության հաշմանդամ

մության սահմանը մեր հանրապետությունում ցածր է, քան արևելքում, այնուամենայնիվ, չափորոշչային փաստաթղթերի համապատասխան պետության կողմից այս խմբի երեխաների համար սահմանված է հատուկ մանկավարժական, հոգեբանական, բժշկական օգնություն:

Բացի այդ, գոյություն ունեցող դրույթների համապատասխան աչքի առաջնային հիվանդությունների, ինչպես նաև աստենոտիպիկ երևույթների դեպքում, որոնք առաջանում են մոտ տարածությունից կարդալիս և գրելիս, թույլ տեսնողների դպրոց ընդունում են այն երեխաներին, ովքեր ունեն առավել բարձր, քան 0,4 տեսողության սրությամբ: Սակայն տիֆլոգրականության մեջ թույլ տեսողության վերևի սահմանը նշվում է 0,2-ը [4,5,3 և ուրիշներ]: Նշենք, որ այս խմբի երեխաները սովորաբար օգնություն են ստանում տեսողության պահպանման դասարաններում, որոնց ցանցը օրըստօրե աճում է բոլոր դպրոցներում:

Վերը նշվածից ելնելով՝ տիֆլոմանկավարժական գրականության մեջ, այն երեխաներին, ովքեր սովորում են Բրայլյան համակարգով, բնորոշում են «մասնակի տեսնողներ» և «մասնակի չտեսնողներ» եզրույթներով: Փաստորեն այս եզրույթները գործածվում են առավել ցածր տեսողության սրություն ունեցող անձանց դեպքում, քան թույլ տեսնողների: Հետևաբար, թույլ տեսնողը տեսնում է ավելի լավ, քան մասնակի տեսնողը: Դա տրամաբանական չէ:

Իհարկե եզրույթաբանության մեջ

առկա այս և նման այլ անճշտություններն ունեն որոշակի բացատրություն: Տիֆլոմանկավարժությունը համեմատաբար երիտասարդ գիտություն է և, բնականաբար, գիտելիքների կուտակմանը զուգընթաց՝ որոշ եզրույթներ հստակեցվում են, որոշները՝ դուրս գալիս, իսկ մյուսները մտնում են գործածության մեջ: Տվյալ հոդվածում ներկայացվում է տեսողության խանգարումներ ունեցող երեխաներին ներկայացվող խմբերի և դրանց անվանումների հստակեցված և կատարելագործված դասակարգում, որը մենք արդեն մի քանի տարի է ներկայացնում ենք Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի հատուկ կրթության ֆակուլտետի տիֆլոմանկավարժության բաժնի ուսանողներին:

Երրորդ ենթախմբի մեջ են մտնում երեխաները, ովքեր ունեն իջեցված կամ նորմայի ու թույլ տեսողության միջև ընկած սահմանային տեսողություն, այսինքն՝ երեխաներ, որոնց տեսողության սրությունը 0,5-ից (50%) մինչև 0,8 (80%)-ի սահմաններում է լավ տեսնող աչքում շտկողական ապակիներով: Երեխաները, որոնց տեսողության սրությունը 0,9-ից 1,0 սահմանում է, պատկանում են նորմալ տեսնողների խմբին (90-100%): Այդ խումբն այստեղ չի դիտարկվում:

Հայտնի է, որ տեսողության պաթոլոգիայով երեխաների մեջ հատուկ խումբ են կազմում տեսողության ֆունկցիոնալ խանգարումներով երեխաները, որոնց մեջ մեծ թիվ են կազմում ամբլիոպիայով և շլոթյամբ երեխաները [1,2 և ուրիշներ]: Ամբլիոպիան և շլոթյունն առաջացնում է

տեսողության սրության և տեսողական մյուս գործառույթների իջեցում: Ամբլիոպիայով և շլրությամբ երեխաների մեծամասնության տեսողությունը հնարավոր է վերականգնել հատուկ կազմակերպած բուժական աշխատանքի միջոցով, որոնք կազմակերպվում են հատուկ հաստատություններում կամ պոլիկլինիկաների տեսողության պահպանման կաբինետներում:

Տեսողության խանգարման առաջացման պատճառները շատ են [1 և ուրիշներ]: Դրանց թվին են պատկանում ի ծնե (այդ թվում ժառանգական) և ձեռքբերովի հիվանդությունները: Տեսողության օրգանի պաթոլոգիայի առավել տարածված ձևերը տեսողական նյարդի, ցանցաթաղանթի, տեսողական օրգանի զարգացման ի ծնե պաթոլոգիաները, ռեֆրակցիայի անոմալիաները, ի ծնե գլաուկոման: Այս կամ այն հիվանդության դեպքում տեսողական վերլուծիչի հնարավորությունների,

նաև տեսողական օրգանի որոշակի պաթոլոգիայի ընթացքի առանձնահատկությունների իմացությունը որոշում է ոչ միայն աշխատանքի մեթոդիկան, այլև վերականգնողական միջոցառումների մարտավարությունը:

Եթե երեխան տեսողությունը կորցրել է երեք տարեկանից հետո, ապա որոշակի հոգեբանամանկավարժական օգնության դեպքում որոշ տեսողական պատկերներ կարող են պահպանվել ամբողջ կյանքում: Եթե տեսողությունը կորցրել է դպրոցական տարիքում, ապա այդպիսի պատկերները, բանականաբար, և որակապես և քանակապես էականորեն շատ են: Ծնողները և մանկավարժները, ովքեր աշխատում են այս երեխաների հետ, այդ մասին պետք է իմանան և հիշեն ու կազմակերպեն այնպիսի աշխատանքներ, որոնք նպատակաուղղված են տեսողական տպավորությունների, պատկերների պահպանմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Белецкая В.И. Гнеушева А.Н. Охрана зрения слабовидящих школьников. Пособие для учителей.-М., Просвещение, 1982.-127с.
2. Григорян Л.П. Психофизиологическое исследование зрительных функций нормально видящих и слабовидящих школьников- М., Педагогика, 1983.
3. Денискина В.З. Коррекционно-реабилитационные аспекты образования старших школьников с нарушением зрения// Материалы науч. Пед.

- конф. тифлопедагогов и незрячих учителей, посвященной 200-летию РГПУ им А.И.Герцена.-М., 1997с.105-108.
4. Земцова М.И. Учителю о детях с нарушением зрения. М., 1973.-173с.
5. Литвак А.Г. Психология слепых и слабовидящих.-Санкт-Петербург.- 2006.-325с.
6. Солнцева Л.И. Тифлопсихология детства.-М.2000.-249 с.

РЕЗЮМЕ
К ПРОБЛЕМЕ КЛАССИФИКАЦИИ ДЕТЕЙ С НАРУШЕНИЕМ ЗРЕНИЯ

Р.Н.Азарян

заведующий кафедрой специальной педагогики и психологии Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна, доктор педагогических наук, профессор

М.К.Марутян

доцент кафедры специальной педагогики и психологии Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна, кандидат педагогических наук

В статье рассматриваются и уточняются ряд специальных терминов, применяемых в армянской тифлопедагогике и на практике для организации

обучения, воспитания, реабилитации и социальной адаптации детей с нарушением зрения.

SUMMARY
CLASSIFICATION OF CHILDREN WITH VISUAL IMPAIRMENTS

R.N.Azaryan

Head of the Chair of Special Education and Psychology Khachatur Abovyan Armenian State Pedagogical University, Doctor of Pedagogical Sciences, Professor

M.K.Marutyan

Associate professor at the Chair of Special Education and Psychology Khachatur Abovyan Armenian State Pedagogical University, Candidate of Pedagogical Sciences

The article considered and specified a number of the special terms applied in the Armenian tiflopedagogics and in practice how to the organized training,

education, rehabilitation and social adaptation of children with visual impairments.

ՍԱՅԼԱԿՆԵՐՈՎ ՊԱՐԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՇՄԱՆ ԴԱՄՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԻՋՈՑ

Վ. Ա. Ալեքսանյան

Ֆիզիկական կուլտուրայի հայկական պեդագոգիկական ինստիտուտի մարմնամարզության և սպորտային պարերի ամբիոնի ասիստենտ, սպորտային պարերի սպորտի վարպետ, մանկավարժական գիտությունների թեկնածու

Ֆ. Գ. Ղազարյան

Ֆիզիկական կուլտուրայի հայկական պեդագոգիկական ինստիտուտի պրոռեկտոր, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հանգուցային բառեր և արտահայտություններ. սպորտային պարեր, պարային վերականգնում, ֆիզիկական զարգացում, շարժողական պատրաստվածություն, կյանքի որակ, սոցիալականացում, հաշմանդամ, պարատեսակ, առողջական վիճակ, մրցակցություն, սոցիալական հարմարեցում, հաշմանդամային սպորտ :

Արդի հասարակության մեջ սոցիալ-տնտեսական և քաղաքական բարեփոխումներին բնորոշ է դրանց բարեգործական և մարդասիրական ուղղվածությունը: Այդ առումով, բարեփոխումների գործընթացում հատուկ տեղ է զբաղեցնում հաշմանդամների վերականգնման և սոցիալական հարմարեցման խնդիրները, այդ թվում՝ նաև ֆիզիկական դաստիարակության, առողջարարական ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում: Տվյալ սոցիալական ծրագրի համալիր իրականացումը նախատեսում է հաշմանդամների շրջանում առավելագույն

հնարավոր սոցիալական, աշխատանքային, հասարակական և կենցաղային գործունեության ապահովում: [3,8,9]:

2008 թվականից ուժի մեջ է մտել “Հաշմանդամների իրավունքների պաշտպանության մասին” ՄԱԿ-ի կոնվենցիան, որը կոչված է պաշտպանելու սահմանափակ հնարավորություններով ավելի քան 600 մլն (այդ թվում 180 000 Հայաստանում) անձանց շահերը: Կոնվենցիան բաղկացած է 50 հոդվածից, որոնք ուղղված են հաշմանդամների իրավունքների պաշտպանությանն ու խրախուսմանը, նրանց նկատմամբ խտրականության վերացմանը, հաշմանդամների իրավունքների և հասարակության կյանքին մասնակցելու ապահովմանը և այլն: Այդ կարևոր միջազգային իրավական փաստաթուղթն արդեն ստորագրել են 150 երկրներ, այդ թվում՝ Հայաստանը:

Վերջին տասնամյակների ընթացքում հաշմանդամային ֆիզիկա-

կան կուլտուրայի և սպորտի զարգացումը հանգեցրել է այդ շարժման ինքնատիպ տարբերակմանը: Առաջին հերթին առանձնացել է այսպես կոչված “հաշմանդամային սպորտը”, և առաջացել է մի ուղղություն, որի խնդիրը հաշմանդամների վերականոնողական համալիր ապահովման նպատակով ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հնարավորությունների առավելագույն օգտագործումն է:

Սակայն հաշմանդամային սպորտը հիմնադրվել է անցած դարի 20-ական թվականների կեսերին. դրա հիմնադիրն է գերմանացի բժիշկ Լյուդվիգ Գուտմանը, ով հաշմանդամային սպորտը հաստատել է որպես մարդու ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական վերականոնման միջոց:

Այսօր հաշմանդամային սպորտի մեջ ընդգրկված է ավելի քան 20 մարզաձև, որոնք տարածվել են աշխարհի ավելի քան 100 երկրներում:

Վնասված ողնաշարով մարդկանց խաղերն առաջին անգամ “պարալիմպիական” անվանեցին 1964 թ.-ին: “Պարալիմպիադա” եզրույթն առաջացել է “պարապլեգիա” և “օլիմպիադա” բառերից: Հետագայում, երբ այդ խաղերն անց կացվում էին կանոնավոր կերպով՝ ներգրավելով ոչ միայն պարապլեգիայով տառապող, կաթվածահար, այլև այլ հաշմանդամ մարզիկներին, հիմնական նշանակություն ձեռք բերեց “պարա”՝ “միացում” նախածանցը, այսինքն՝ “Պարալիմպիադան” ստացավ “օլիմպիական խաղերին հարող խաղեր” նշանակությունը:

Հաշմանդամային մարզաձևերի

շարքին են դասվում նաև սայլակներով սպորտային պարահանդեսային պարերը, որոնք դրական ազդեցություն են գործում պարապոլների ֆիզիկական զարգացման վրա, նպաստում են օրգանիզմի դիմացկունության, ուժի, առողջության, ճկունության զարգացմանը, ինչպես նաև բարոյականային և գեղագիտական որակների, պարընկերոջ և հանդիսատեսի նկատմամբ հարգանքի դաստիարակմանը [1, 2, 7,10]:

Ըստ էության, սայլակներով պարերը ողնաշարի վնասման կամ հենաշարժողական կառույցի խանգարմանը հանգեցնող հիվանդությունների հետևանքով հաշմանդամ դարձած մարդկանց վերականոնման միջոց են: Դրանք թույլ են տալիս միաժամանակ բարելավել և՛ ֆիզիկական վիճակը, և՛ զարգացնել մարդկանց անհատական ստեղծագործական հատկությունները:

Հաշմանդամային սայլակներով պարերը հաճախ անվանում են նաև “ինկլյուզիվ պարարվեստ”, այսինքն՝ բոլոր, այդ թվում՝ սահմանափակ հնարավորություններով մարդկանց կյանքին, սոցիումին ակտիվորեն մասնցելու գործընթաց:

Սայլակներով պարերի հիմնական խնդիրը սայլակավոր հաշմանդամներին ֆիզիկական կուլտուրային և սպորտին հաղորդակից դարձնելն է, ինչպես նաև և ֆիզիկական դաստիարակությամբ և սպորտով նրանց կանոնավոր կերպով պարապելուն նպաստելը, հոդերի շարժունությունն ու ուժային դիմացկունությունը պահպանելն ու զարգացնելը, լիարժեք կյանքին խանգարող ֆիզիկական և հոգեբանական խոչընդոտներ:

րի հաղթահարման ընդունակության ձևավորումը և այլն:

Սայլակներով պարերը Եվրոպայում տարածվելուց հետո հասան Ասիա և Ամերիկա: Այսօր աշխարհի 50 երկրներից ավելի քան 5 հազ հոգի ինչպես սիրողական, այդպես էլ պրոֆեսիոնալ մակարդակով զբաղվում է սայլակներով պարերով:

Աշխարհի բազմաթիվ երկրներում գոյություն ունեն սայլակներով պարերի ֆեդերացիաներ [9, 11, 12], ինչպես նաև Միջազգային պարալիմպիական կոմիտեին կից գործող բաժանմունքներ: Այն ծրագրում նաև իրականացվում է տարբեր մակարդակի միջազգային մրցումներ, երկու տարին մեկ՝ Եվրոպայի և աշխարհի առաջնություններ:

Գոյություն ունեն սայլակներով պարերի տարբեր տեսակներ. մենապար (SINGLE DANCE), երբ պարում է սայլակում նստած մենապարողը, զուգապար (DUO DANCE), երբ պարում է սայլակներում նստած զույգը, համակցված պար (COMBI DANCE), երբ զույգ են կազմում սայլակով պարողը և ոչ հաշմանդամ պարողը, խմբապար (GROUP DANCE), որի դեպքում հանդես են գալիս սայլակներով պարողները կամ սայլակներով և առանց սայլակների պարողների խումբը:

Առավել տարածված են “combi” ոճի սայլակներով սպորտային պարերը, երբ պարային զույգը կազմված է հաշմանդամից և լիովին առողջ պարողից:

Պարալիմպիական խաղերում սպորտային պարերի ծրագիրը ներառում է դասական (վալս, տանգո, դանդաղ ֆոքստրոտ) և լատինա-

մերիկյան (սամբա, չա-չա-չա, ռումբա, քայվ) պարերը [11, 12]: Զույգերը, ըստ սայլակով պարողի հաշմանդամության աստիճանի բաժանվում են երկու կարգի:

Մրցակցական գնահատականների չափանիշներն են պարելիս տակտի և ռիթմի զգացողությունը, շարժումների տեխնիկան, ներդաշնակությունն ու արտահայտչությունը, ինչպես նաև խորեոգրաֆիան:

Եվրոպայում իրականացվում են սայլակներով պարերի տարբեր մրցումներ. պարային ներկայացումներ, երկրների առաջնություններ, Եվրոպայի առաջնություններ: Առաջին պաշտոնական միջազգային առաջնությունը տեղի է ունեցել 1997 թ. Շվեդիայում, իսկ աշխարհի առաջին առաջնությունը՝ մի տարի անց ճապոնիայում: Հենց այդտեղ են սայլակներով պարերը որպես մարզաձև ներառվել Միջազգային Պարալիմպիական խաղերի ցանկի մեջ:

Սայլակներով սպորտային պարերի միջազգային մրցումներին մասնակցելու համար պարողները պետք է լինեն Ազգային պարալիմպիական կոմիտեի անդամ, ունենան գրանցման գրքույկ, դժբախտ պատահարից ապահովագրության վկայական և վճարային պարտավորություն:

Մրցութային կանոնների համաձայն, պարային զույգերը պետք է կազմված լինեն արական և իգական սեռին պատկանող անձանցից, որոնցից մեկն օգտվում է հաշմանդամային սայլակից:

Բոլոր սայլակներով պարողները պետք է ունենան նվազագույն հաշմանդամություն. սպորտային պարերով զբաղվելու համար պահանջվում

է բժշկական թույլտվություն: Միցումներին մասնակցելու իրավունք ունեն հենաշարժողական բնույթի հաշմանդամություն ունեցող մարզիկները:

Նվազագույն հաշմանդամություն են համարվում մտավոր ոլորտի տարբեր խանգարումները, զարգացման գործընթացի լուրջ հապաղումները, ուղեղային կաթվածը, օլիգոֆրենիայի տարբեր ձևերը, սայլակավոր հաշմանդամները, հոդային փոփոխություններ ունեցողները և այլն:

Պարային վերականգնման գործընթացների հիմնական խնդիրը հաշմանդամի մեկուսացման հաղթահարումն է, ընկերներ գտնելը, անձի սոցիալականացումն է և հոգեկան շփումը:

Կարևորում ենք նշել, որ ի տարբերություն սպորտային և ընդհանրապես այլ պարերի, պարային վերականգնումը պայմանավորված է հաշմանդամի ոչ այնքան ֆիզիկական, որքան հոգեկան, հուզականային կողմի հետ: Հաշմանդամները կենդանի մարդիկ են, և նրանց հնարավորությունների օգտագործումն անհրաժեշտություն է: Հաշմանդամներին կյանքի սոցիալական և հոգեկան ոլորտների մեջ ներգրավելու համար պետության օգնությունն անհրաժեշտություն է, պահանջվում են մասնագետներ, կամավորներ: Որքան ավելի անտարբեր է հասարակությունը, այդքան ավելի շատ միջոցներ է հարկավոր պետությանը այդ անտարբերությունը փոխհատուցելու համար: Նշենք, որ հաշմանդամները նույպես կարող են օգնել հասարակությանը:

Ֆիզիկական կուլտուրայի և դաս-

տիարակության բոլոր միջոցներն ու հնարավորությունները պետք է ուղղվեն հաշմանդամների շարժողական և մտավոր ակտիվության բարձրացմանը, ինչը հարկավոր է դիտարկել որպես հաշմանդամների՝ հասարակությանը ինտեգրվելու անհրաժեշտ և որոշիչ պայման: Այստեղ խոսքը բազմակողմանի վերականգնման և սոցիալական հարմարեցման մասին է:

Ներկայումս ակտիվորեն զարգանում է վերականգնողական, ֆիզկուլտուրային- առողջարարական և ֆիզկուլտուրային-սպորտային կենտրոնների, ակումբների, խմբակների ցանցը, հաշմանդամների ֆիզկուլտուրային և սպորտային շարժման տարբեր պետական և հասարակական ձևերը:

Մի շարք երկրներում (Բելառուս, Անգլիա, Ռուսաստան և այլն) գոյություն ունեն հաշմանդամ մարզիկներին օգնություն ցուցաբերող հատուկ կենտրոններ և հիմնադրամներ [4, 5,6]: Այդ մարդասիրական հաստատությունները հարմարեցված են սայլակներով փոխադրվող մարդկանց համար: Այստեղ կան հատուկ վագրուղիներ, լոգարաններ, զուգարաններ, ճաշարաններ, բաղնիքներ, լվացքի մեքենաներ, կահույք, այսինքն՝ ստեղծված են բոլոր պայմանները, որպեսզի սայլակավոր հաշմանդամը իրեն զգա ֆիզիկապես լիովին անկախ: Այս վերականգնողական ծրագիրը նախատեսում է աշխատանքային շարժողական գործողություններ, տուրիզմ, օտար լեզվի դասընթացներ, համակարգչային տեխնոլոգիաներ և, անշուշտ սպորտի միջոցով վերականգնվելու

հնարավորություններ, ընդհանուր ֆիզիկական պատրաստություն, անբորբիկա, գեղարվեստական մարմնամարզություն: Շեշտը, բնականաբար, դրվում է սայլակներով սպորտային պարերի վրա:

Սայլակներով պարերն աստիճանաբար ավելի լայն տարածում են գտնում, պարերի այս հիրավի անխոչըդոտ ձևն ավելի ու ավելի մեծ թվով մարդկանց է գրավում:

Սայլակներով պարի արդի հայեցակարգն ունի է երեք բաղադրիչ. սայլակներով պարը՝ որպես սպորտ (մրցակցային ոճ), սայլակներով պարը՝ որպես վերականգնման մեթոդ (մարդու օրգանիզմի բարելավում ներսից, ֆիզիկական գործառույթների վերականգնում), սայլակներով պարը որպես կյանքի որակը բարելավելու (խոչընդոտները հաղթահարելու, ընկերներ գտնելու, կյանքին իմաստ հաղորդելու) միջոց:

Հայաստանում այդ բաղադրիչներ-

րի հետագա զարգացումը, անշուշտ, պահանջում է մի շարք միջոցառումների իրականացում: Նախ և առաջ՝ ֆիզիկական խանգարումներով անձանց կրթության կազմակերպում և անցկացում: Երկրորդը՝ բժշկական ծրագրերի իրականացում: Երրորդը՝ բարեգործական երեկոների անցկացում՝ որպես ընկերներ գտնելու հնարավորություն: Չորրորդը՝ հասարակական վայրերում սայլակներով սպորտային պարերի ցուցադրում: Հինգերորդը՝ սայլակներով պարերի մրցումների կազմակերպում:

Այսպիսով, սայլակներով սպորտային պարերը սայլակավոր հաշմանդամների վերականգնման միջոց են, նրանց սոցիալական հարմարման և ինտեգրման կարևոր պայման, որոնք սահմանափակ ֆիզիկական հնարավորություններով անձանց տալիս են իրենց իսկական մարզիկ զգալու հնարավորություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ալեքսանյան Վ.Հ. Ֆիզիկական պատրաստության մեթոդիկական սպորտային պարերում.- թեկն.ատեն.սեղմագիր, Երևան, 2013, 25 էջ:

2. Լիսիցեան Ս. Ժողովրդական մանկական խաղեր.- Թիֆլիս.- ՀՏՄԷՍ.-1907 - 46 էջ:

3. Айшервуд М. М. Полноценная жизнь инвалида (пер. с англ.).- М.: Педагогика.- 1991.- 88 с.

4. Башкирова М. И. Физкультурно-оздоровительная и спортивная работа в зарубежных странах среди ин-

валидов, пользующихся колясками.- Обзорная информация. - М.: ЦОНТИ.- ФиС.- 1991.

5. Брехман И. И. Валеология – Наука о здоровье.- М.: ФиС.- 1990,- 208 стр.

6. Епифанов В. А. Лечебная физическая культура в травматологии. - М.: Медицина. - 1987,-211с

7. Жиленкова В. П. Физическая культура и спорт инвалидов с дефектами опорно-двигательного аппарата: методические рекомендации. - Л.: ИФК. - 1988.-137с

8. Носов А. Г. Готовность к сознательному самосовершенствованию для личного и общественного благополучия. Материалы международной научно-практической конференции. – Волгоград: 2014. – с. 139-146

9. Организационно-клинические основы социальной трудовой реабилитации инвалидов. – Л.: Медицина. – 1985.-189с

10. Серкульская Е. Состояние и перспективы развития спортивных танцев на инвалидных колясках. – Материалы V-ого международного научного конгресса. – Минск: 2001. – с. 17-21

11. <http://paralympic.org/paralympian/2001/>.

12. http://aupam.narod.ru/pages/invasport/sport_tancih_inva_kolyaske/oglavlenie.shtml

РЕЗЮМЕ

ТАНЦЫ НА КОЛЯСКАХ КАК СРЕДСТВО РЕАБИЛИТАЦИИ ИНВАЛИДОВ

В.А. Алексанян

ассистент кафедры гимнастики и спортивных танцев Армянского государственного института физической культуры, мастер спорта по спортивным танцам, кандидат педагогических наук

Ф.Г. Казарян

проректор Армянского государственного института физической культуры, доктор педагогических наук, профессор

В статье рассмотрены методические подходы по организации и проведению танцевальной реабилитации инвалидов. Подчеркнута роль и значение повышения двигательной и умствен-

ной активности лиц, имеющих отклонения в состоянии здоровья. Отмечена особая значимость танцев на колясках и участия инвалидов в спортивных соревнованиях.

SUMMARY
REHABILITATION OF DISABLED PEOPLE BY DANCES ON WHEELCHAIRS

V.A. Aleksanyan

Assistant at the chair of Sport dances and gymnastics Armenian State Institute of Physical Culture, a sport master on sport dances, Candidate of Pedagogical Sciences.

F. G. Ghazaryan

*The Vice- Rector of the Armenian State Institute of Physical Culture,
Doctor of Pedagogical Sciences, Professor*

The methodical approaches on the organization and conduction of dancing rehabilitation of the disabled people have been considered in the article. Emphasized the role and value of increase of physical and intellectual activity of

the persons having deviations in a state of health..In the this article noted the special importance of wheelchair dances and participation of disabled people in sports competitions.

ԻՆՉՈՐԻ ԿԱՄՈՎԻՆ ԶԻՋԵԼ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ե.Հ. Գևորգյան

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պեդագոգական մանկավարժական համալսարանի հարուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր, բանասիրական գիտությունների դոկտոր

Հանգուցային բառեր և արտահայտություններ. բրայլյան համակարգ, մեծատառերի բացակայություն, իմաստային շփոթություններ, երկու նոր գրանշանների ներդրում:

Սույն հոդվածում մենք ցանկանում ենք քննության առնել մի խնդիր, որը տասնամյակներ շարունակ մտահոգել է մտավոր աշխատանքով հայ չտեսնողներին, մասնավորապես՝ գիտաշխատողներին, մանկավարժներին ու հատուկ կրթության ֆակուլտետի ուսանողներին: Այն պատճառ է դարձել հակադարձ կարծիքների՝ ունենալով սակավաթիվ կողմնակիցներ ու մեծաթիվ մերժողներ: Առաջնորդվելով 'Լավ է ուշ, քան՝ երբեք՝ սկզբունքով, ի վերջո գեթ բանավիճային կարգով, հարկ համարեցինք խնդիրը ներկայացնել մամուլում՝ ենթադրելով, որ կլինեն թեր և դեմ հոդվածներ ու վերջնական պարզություն կմտցվի խնդրի լուծման հարցում:

Ինչի մասին է խոսքը: Հայերենի գրության բրայլյան համակարգում մեծատառեր չեն գործածվում կամ գրեթե չեն գործածվում, բացառությամբ մի քանի որոշակի դեպքերի: Ամեն ինչ ու ամենուրեք գրվում

է փոքրատառերով: Այսպես է եղել ի սկզբանե, դեռևս երբ երահան Նիկողայոս Տիգրանյանը անցյալ դարի 20-ական թվականների սկզբներին լատինական ու ռուսական այբուբենները հարմարեցնում էր հայերենին [1]: Դեռ խոսք կլինի այն մասին, թե ինչու մեծատառերի գործածության հարցում նա հետևեց ռուսերենին, որտեղ նույնպես մեծատառեր չկան, և ոչ՝ արտասահմանյան լեզուներ, որոնցում, թեև ոչ բացարձակ կերպով (օր. յուրաքանչյուր նախադասություն չի սկսվում մեծատառով), բայց մեծատառերով գրելու կանոնների մեծագույն մասը գործածության մեջ է: Մեծատառով են գրվում հապավումները, հատուկ անունները... Մեր ձեռքի տակ է հունգարերեն - էսպերանտո բրայլյան մի բառարան՝ տպված Հունգարիայում, որտեղ բառացանկերում հատուկ անունները գրված են մեծատառով, մինչդեռ Ռուսաստանում տպված բրայլյան անգլո-ռուսերեն բառարանում երկու լեզվում էլ հատուկ անունները սկսվում են փոքրատառով [2; 3]:

Այսպիսով, քանի որ հայերենի բրայլյան համակարգում մեծատառեր գրեթե չկան և գրքերն ու դասա-

գրքերը տպագրվում են միայն փոքրատառերով, ուստի ուղղագրության համապատասխան բաժինը դպրոցական ծրագրերում չկա, համարվում է ավելորդ ու չի դասավանդվում: Միջնակարգն ավարտած չտեսնողների մի մասը չի շարունակում ուսումը, մի մասն էլ սովորում է ոչ հասարակագիտական ֆակուլտետներում, որտեղ ուղղագրության դասավանդումը պրոֆիլային չէ: Մնում են բանասերները, որոնք առաջին անգամ են ծանոթանում մեծատառերի գործածության կանոններին: Բայց միայն տեսականորեն: Այնուհետև գործնականում նրանք մեծատառերին ոչ հանդիպում են գրքեր կարդալիս և ոչ էլ կիրառում գրելիս: Իսկ այն, ինչ գործնականում մշտապես չկա, արագորեն մոռացվում է, նույնիսկ յուրացրած ամբողջ լեզուն, էլ ուր մնաց թե՛ մի քանի կանոն: Եվ ահա արդյունքը լինում է այն, որ բացառությամբ Հայաստանի կույրերի միավորման հրատաակության մի քանի աշխատակիցների և գիտությամբ զբաղվողների, մենք ուղղագրության նշված բաժինը չենք յուրացնում: Թող մեզ ներեն ընթերցողները, եթե ասենք, որ մեր կատարած հարցումների համաձայն ամենևին էլ ոչ բոլոր (նույնիսկ մտավոր աշխատանքովն քով զբաղվող) չտեսնողները գիտեն, որ մեծատառով են սկսվում Փարիզյան կոմունա, Նոր տարի, Երկրորդ համաշխարհային պատերազմ բառակապակցությունները, որովհետև նշում են համաշխարհային կարևորության իրադարձություններ, և կամ, որ Արշակ Երկրորդ, Աշոտ Ողորմած, Պիպին Կարճահասակ բաղադրյալ անունների ոչ միայն առաջին, այլև

երկրորդ բաղադրիչները, թեև գոյականներ են, այլ համապատասխանաբար՝ թվական, դերբայ, ածական, նույնպես գրվում են մեծատառով, որովհետև նշում են անձանց բնորոշ հատկանիշներ և հատուկ կանոնների մաս են կազմում: Ինչպիսի իրավիճակների կարող են բերել չիմացության այսպիսի դեպքերը դժվար չէ ենթադրել: Ահա դրանցից երկուսը: Երեխան չտեսնող բուհավարտ ծնողից հարցնում է այս կամ այն բառի մեծատառով գրվել- չգրվելու մասին... 2) Գործընկերները քննարկում են մեծատառով գրության որևէ կանոն. և նրանցից մեկը, որի կարծիքն ուզում են իմանալ, տեղյակ էլ չէ նյութի էությունից..

Բայց թողնենք հարցի հուզական կողմը և տեսնենք, թե մեզանում, գործնականում, մեծատառերի անտեսումը ինչ շփոթությունների և անհարմարությունների է հանգեցնում: Դիմենք փաստերին: Արձակ խոսքում, շարադրվող նյութի պահանջով, հաճախ մեջբերվում են բանաստեղծության տողեր: Եթե դրանք քիչ են, օրինակ՝ երկուսը, ընդհանուր խոսքաշարից չեն անջատվում բաց թողնվող տողով ու չեն գրվում չափածոյին բնորոշ առանձին բանատողերով, այլ մեջբերվում են անմիջապես արձակ հոծ շարադրանքում: Քանի որ յուրաքանչյուր բանատող սկսվում է մեծատառով, ընթերցողը տարբերում է որտեղ է վերջանում առաջինը, որտեղ է սկսվում երկրորդը: Բրայլյան գրությամբ մեծատառեր չկան, ուստի բանատողերի զատումը դժվարանում է. արդյոք գործունենք մեկ, թե՛ երկու բանատողի հետ: Մանավանդ, եթե բանաստեղ-

ծությունն անծանոթ է: Չէ որ հեղինակի մտահղացմամբ պայմանավորված, բանատողերը կարող են երկար լինել, նույնիսկ շատ երկար, ինչպես Ավ. Իսահակյանի Աբու-Լալա Մահարի պոեմում՝ հիշեցնելով ուղտերի քարավանի ձգվածությունն ու դանդաղ ընթացքը [4]:

Չափածոյում բանաստեղծություններ են լինում կարճ, երկար, կտրտված, սկզբից կամ խորքից գրվող բանատողերով, նույնիսկ մեկ բառը՝ մեկ բանատող (Չարենց, Մայակովսկի...): Փաքրատառով գրությունը հնարավորություն չի տալիս որոշելու մի բանատողի սկիզբն ու վերջը:

Բազմաթիվ անձնանուններ առաջացել են հասարակ գոյականներից: Մեծատառի բացակայության պարագայում, որոշակի խոսքաշարերում, հարց է առաջանում՝ մեր առջև հատուկ անուն է, թե՞ հասարակ: Ահա խոսքաշարից դուրս առաջարկում ենք նախադասություն: Ինձ ամենից շատ (<)հասմիկն է դուր գալիս: Ինչո՞ւ էր Կ(կ)որյունը անհանգիստ, հիվանդ էր: Որոշեցինք հանդիպել Ա(ա)րշալույսին: Չի կարելի վստահորեն պնդել՝ դրանցում խոսքերը մարդկանց մասին է, թե՞ ծաղկի, կենդանու, օրվա հատվածի: Այստեղ մեզ կարող են առարկել, թե խոսքաշարում դժվարություն չկա, անորոշության դեպքում մեկ-երկու նախադասություն հետո ընթերցողը կռահում է իսկությունը: Բանն էլ հենց այդ է: Ընթերցողին չպիտի զբաղեցնել կռահումներով. ամեն ինչ պետք է լինի պարզ ու միանշանակ: ՀԿՄ հրատարակչությունը մեսրոպյան տպագրությունից բրայլյան համակարգով արտատպել է

Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու ժողովածուն [5]: Մեծատառերին վերաբերող բաժնին ծանոթանալը պահանջում է մշտական լարվածություն, կռահելու ընդգծված ընդունակություն, որովհետև խոսքաշարում մեծատառեր չկան. կանոնները պահանջում են մի բան, լուսաբանող օրինակները ցույց են տալիս հակառակը: Որոշ կանոններ ունեն կետեր, որոնց մի մասը հանձնարարում է մեծատառով գրվող բառեր, մյուս մասը՝ փոքրատառով: Երկու դեպքում էլ օրինակները գրված են նույն կերպ՝ փոքրատառերով: Պետք է կարողանալ շփոթը հաղթահարել: Եվ հետո. լինում են խոսքաշարեր, որտեղ նախադասության իմաստից բառի անորոշությունը չի պարզվում մեկանգամյա գործածության պատճառով, հաճախ էլ՝ նույնիսկ մի քանի նախադասության մեջ գործածված լինելու դեպքում: Երևանի՝ հատուկ դպրոցի կույր երեխաների դպրոցական ծրագրում Հովհ. Թումանյանի Թագավորն ու չարչին ստեղծագործության հետևյալ տողերը գրված էին այսպես. 'Խնչ է արել շահը ձեզ վատ... բերել է ձեզ առատ փարիա, աչքն էլ քաղցր միշտ ձեզ վրա' [6]: Իսկ ի՞նչ է նշանակում փարիա, որն առատ բերել էր շահը: Հարցնում ենք ուսուցչուհուն: Խոստանում է պատասխանել հաջորդ օրը: Ո՛չ հաջորդ օրը, ո՛չ էլ ուրիշ օր չի պատասխանում: Մենք էլ հարկ չենք համարում նորից հարցնելու: Բայց ի՞նչ է նշանակում փարիա: Տարիներ սպասեցինք, մինչև որ բանասիրական ֆակուլտետում սովորելիս բալլադը մեզ համար կարդացին մեսրոպյան հրատարակությամբ: Փարիան

գրված էր... մեծատառով: Այսպես ուրեմն, եթե բրայյանում էլ այն լիներ մեծատառով, պարզ կլիներ, որ բնականտեղի է Պարսկաստանում, ուր շահը բնակեցրել էր հայերին՝ տեղահանելով Ջուղայից:

Այլ օրինակ. Յարուսլավ Հաշեկի 'Քաջ գինվոր Շվեյկի արկածները' վեպի բրայյան հրատարակությունում կա մի հատված, որտեղ հիշվում են զինվորական ավստրոհունգարական կոչումներ և անձնանուններ. 'Վագոնի դռների առաջ կանգնած էր պրոֆուր... լավ մարդ էր պրոֆուր': Պարզ չի դառնում, պրոֆուր մարդու անուն է, թե՞ զինվորական կոչում: Համեմատում ենք մեսրոպատառ հրատարակորթյան հետ. այստեղ գրված է փոքրատառով: Ուրեմն՝ անձնանուն չէ: Փնտրում ենք օտարլեզվյան բառարաններում. նշանակում է բանտային վերակացու: Մեծատառերի անհրաժեշտության մասին խոսող փաստերի շարքն առայժմ սահմանափակենք մի ակնառու օրինակով: Վերջերս մեզ հանձնարարված էր 'Գարեգին Նժդեհի ստեղծագործություններին բնորոշ լեզվաոճական միջոցները' գիտական թեման: Ուսումնասիրությունը սկսեցինք Գարեգին Նժդեհ գրքի բրայյան տպագրության երկու հատորով [7]: Քանի որ աշխատանքի պահանջով Գ. Նժդեհի ողջ գրական ժառանգությունը պիտի կարդայինք մի քանի անգամ, որոշեցինք նույն գործերը կարդալ մեսրոպյան տպագրության Հատընտիրում, որտեղ, ի տարբերություն մյուս հրատարակությունների, հեղինակի լեզուն անձեռնմխելի է մնացել [8]:

Եվ ճվ զարմանք: [8]: Պարզվում

է՛ Նժդեհը, մեզ համար հասարակ թվացող հարյուրավոր գոյականներ, նույնիսկ ածականներ, գրում է մեծատառով՝ Հայրենիք, Անկախություն, Ազատամարտ..., Մետերլինգյան, նույնիսկ ժողովուրդների աուններ, երբ խոսքը նրանց մշակույթի, ազատաբաղձության մասին է՝ Հույնը, Հռոմեացին, Չեխը, Լեհը, Մակեդոնացին, Հայը..., որոշակի բառակապակցություններում՝ բոլոր բաղադրիչները. Մեծ Տառապանք, Գրչի Մարդ, Ցեղի Ոգի... Նախադասություններ կան, որտեղ բառերի մի զգալի մասը մեծատառով են... Նժդեհը ներկայացավ նորովի: Բրայյան համակարգով ընթերցողն այդպես էլ մնում է անտեղյակ ու անհաղորդ հեղինակի գրելաոճի սույն կողմին: Մինչդեռ Նժդեհը մեծատառերի է դիմում նպատակամղումով՝ համապատասխան բառը հատուկ ընդգծելու, ընթերցողի ուշադրությունը հրավիրելու, ակնածանք ու գնահատանք արտահայտելու համար: Նույն այս նպատակով ենք մենք առօրյայում գործածում Մարդ մեծատառով արտահայտությունը: Ուրեմն մեծատառով գրությունը զուտ լեզվական նկատառումներից բացի, որոնք հանրահայտ են, ունի բարոյահոգեբանական, եթե կուզեք, նաև դաստիարակչական նշանակություն: Ինչպե՞ս կարելի է միակերպ փոքրատառերով գրել (մեղամեր մեծերին, մեղավ մեր սրբավայրերին) Մեսրոպ Մաշտոց, Վարդան Մամիկոնյան, Գրիգոր Նարեկացի, Խաչատուր Աբովյան, Գարեգին Նժդեհ, Հովհաննես Թումանյան, Արամ Խաչատրյան, Շարլ Ազնա-

վուր, ապա նաև՝ Էջմիածին, Տարոն, Ավարայր, Անի, Երևան, Արարատ և առօրյա հասարակ գոյականներ, ասել է, թե նույն ջերմությունն արտահայտել թե՞ առաջինների, թե՞ վերջինների նկատմամբ: Թող ների մեզ ընթերցողը այս հանրահայտ ճշմարտությունները հարկադրված կերպով մեկ անգամ ևս կրկնելու համար:

Եվ չնայած վերը նշված և շատ այլ փաստարկների, որոնցից մի քանիսին ևս շուտով կանդադառնանք, փոքրատառերով գրելու կողմնակիցները մերժում են մեծատառերի գործածությունը՝ բերողով հետևյալ առարկությունները:

ա. Փոքրատառերով գրելը բերում է տեղի, թղթի, ուրեմն և ծախսերի խնայողություն: Չէ որ, օրինակ, յուրաքանչյուր նախադասության սկզբնատառից առաջ պետք է դնել մեծատառի նշան կամ նույնը հապավումների ամեն բաղադրիչից առաջ:

Բայց այսպես առարկողները նժարների վրա դրե՞լ են մի քանի թերթ խնայելու օգտակարությունը և թերի գրագիտության և բարոյահոգեբանական վնասը: Երկրորդ նժարը, իհարկե, շատ ավելի ծանր է: Այդպիսի գնով խնայողությունը իրականում շահեկան չէ, մանավանդ որ ինչպես կտեսնենք բ. կետում, մեծատառերի գործածությունը ամենևին էլ միշտ չէ, որ հանգեցնում է լրացուցիչ ծախսերի:

բ. Մեծատառերի գործածությունը շփոթությունների տեղիք կտա, խիստ կոճվարացնի ընթերցանությունը: Օրինակ՝ վերնագրերի, հապավումների բոլոր տառերը մեծատառ են. ինչպե՞ս կարելի է բազմաթիվ

տառերից առաջ դնել մեծատառի նշանը և ինչպե՞ս կարդալ գրածը:

Նախ, ինչպպես վերը տեսանք, ոչ պակաս, նունիսկ իմաստային շփոթությունների պատճառ է դառնում ամեն ինչ միայն փոքրատառով գրելը: Եվ ապա. իհարկե, ընթերցելիս անհարմություններ կառաջանան, եթե նախադասության մեջ յուրաքանչյուր տառից առաջ մեծատառի նշան դրվի: Մանկավարժական պետական համալսարանի ուսանողները, բրայյան համակարգը սովորելիս, մշտապես զարմանում են. 'Ինչպե՞ս կարելի է մեծատառեր չգործածել, փոքրատառերով գրել վերնագրերը... փոքրատառով սկսել թելադրությունը...': Նրանք նույնպես նկատում են, որ ուղղագրական պահանջի դեպքում ամեն տառից առաջ մեծատառի նշան դնելը, մեղմ ասած, անհարմար է: Ուստի մենք ուսանողների հետ որոշեցինք.

- Եթե բառի միայն առաջին տառն է գրվում մեծատառով, սկզբնատառից առաջ դնել 4, 6 կետերում գրվող գրանշանը:
- Եթե բառի կամ բառակազմության բոլոր տառերն են գրվում մեծատառով, միայն առաջին բառի սկզբնատառից առաջ դնել 3, 5 կետերում գրվող գրանշանը:
- Եթե ամբողջ նախադասության, օրինակ վերնագրի, բոլոր տառեն են մեծատառ, ապա միայն առաջին բառի առաջին տառից դնել վեց կետիկ՝ 1, 2, 3, 4, 5, 6 կետերում գրվող գրանշանը:

Թեև վերջին երկու գրանշանների կիրառությունը պաշտոնապես հաստատված չէ, բայց մենք դրանք համալսարանում գործածում ենք՝ մեզ

համար մեծ օգուտով. թե՞ ընթերցանությունը չի խոչընդոտվում, թե՞ շատ տեղ չի պահանջվում:

- Եթե մեծատառերի գործածությունն անհրաժեշտություն լիներ, առաջինը կընդունեին Ռուսաստանում ու Նախկին Խորհրդային Միության մյուս հանրապետություններում:

Բրայլյան համակարգը ռուսական կայսրություն մուտք գործեց 1880-ական թվականներից, երբ համատարած անգրագիտություն էր, առավել ևս շտենոզների շրջանում: Հարկավոր է բացարձակապես կրթություն չունեցող շտենոզ մարդկանց, մեծ մասամբ տարիքն առածներին, գրագիտություն սովորեցնել: Նպատակահարմար էր հնարավորինս պարզունակ նյութ մատուցել, անտեսել գրության հետ կապված ինչ-ինչ նրբություններ. դրանցից էին մեծատառերը: Խոսքաշարը գրվում էր մեկընդմեջ բաց թողնվող տողերով, մի տառը մյուսից զատվում էր մեկ չգրված վանդակով... 1885թ. այսպես տպագրվեց առաջին ռուսերեն բրայլյան գիրքը [9]: Կայսրության մյուս ժողովուրդները (ավելի քան 40 տարի անց՝ Խորհրդային հանրապետությունները) նույն դժվարություններն ունեին, եթե ոչ ավելին, ուստի հետևեցին ռուսների օրինակին: Բայց նշված սկզբնական ժամանակներից ավելի քան 130 տարի է անցել:

Չտեսնողներն ստանում են նվազագույնը միջնակարգ կրթություն: Բարձրագույն կրթությունը սովորական երևույթ է: Այժմ գրում են մանր ու խիտ կամ շատ խիտ կետիկներով: Արտասահմանում գրքերը տպագրվում են նաև ուղղագրական համակարգով: Իսկ մեզանում մեծատառի հարցը թափընթացով նույնն է մնացել: Բայց ինչո՞ւ ընդօրինակել սխալը, թերին՝ ամեն ինչ փոքրատառերով (ուղղագրական, ավելի ճիշտ՝ սխալագրական) կողմնորոշումը: Գործածության մեջ դնենք մեծատառերը, և թող ռուսներն ու մյուսները հետևեն մեզ, ընդօրինակեն ճիշտն ու գիտականը: Թե ինչպիսի վերաբերմունք ունեն ռուսները դեպի իրենց Ա. Նևսկին, Պյոտր Առաջինը, Մ. Լոմոնոսովը, Ա. Պուշկինը, Պ. Չայկովսկին, Դ. Մենդելեևը, Ի. Կուրչատովը կամ ուրիշ ժողովուրդներ իրենց մեծերն ու սրբավայրերը, այդ իրենց գործն է: Թող գրեն փոքրատառով: Բայց մենք նույն կերպ չենք կարող ու չպիտի առաջվա գրելածնը շարունակենք: Արդ, սույն հոդվածով ԵՊՄՀ Հատուկ կրթության և հոգեբանության ամբիոնը քննարկված խնդրի լուծման առաջին քայլն է կատարում՝ նպատակ ունենալով պատրաստելու այնպիսի տիֆլումանկավարժներ, որոնք չթերանալով մեծատառերի ուղղագրության մեջ, նույնը կպահանջեն իրենց աշակերտներից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ստեփանյան Ա. Ս., Ազատյան Ռ. Ն., Ստեփանյան Տ. Ս., Նիկողոսյան, Տիգրանյան, Զանգակ-97 հրատ., Եր., 2009:

2. Magyar – Eszperantó szótár, Eszperantó – Magyar szótár (բրայլյան), Budapest, 1958:

3. Англо-русский словарь, под ред. О. С. Ахмановой, Москва, изд. Просвещение, 1952 (по Брайлю)

4. Իսահակյան Ավ., Արու-Լալա Մահարի, Հայաստան հրատ., Երևան, 1974, հ. 2, էջ 53-79: Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, խմբագրությանը Հ. Խ.

5. Բարսեղյանի, Եր., 1979թ., 3-րդ գիրք, էջ 123-137 (բրայլյան):

6. Թումանյան Հովհ., Հայաստան, հրատ., Երևան, 1969, հ. 1, էջ 309:

7. Հաշեկ Յարուսլավ, 'Քաջ զինվոր Շվեյկի արկածները', (թրգմ. Ս. Վահունի), Երևան, 1973թ.:

8. Գարեգին Նժդեհ, Երկեր, Արխիվային գործի գործակալություն հրատ., Երևան, 2002, 1, 2, հրատ (բրայլյան):

9. Գարեգին Նժդեհ, Հատընտիր, Ամարաս հրատ., Երևան, 2006թ.:

10. Адлер Анна, Сборник статей для детского чтения, посвященный слепым детям, 1885г. (по Брайлю).

РЕЗЮМЕ

ПОЧЕМУ ДОБРОВОЛЬНО УСТУПАТЬ В ПИСЬМЕННОСТИ?

Է. Ս. Գեորգյան

профессор кафедры специальной педагогики и психологии Армянского государственного педагогического университета имени Хачатуря Абовяна, доктор филологических наук

В армянском языке в системе Брайля большие буквы не употребляются, что приводит к путаницам и смысловым неопределенностям. Кроме того, в отличие от обыденных слов писать с большими буквами имена великих людей и сокровенных мест имеет патристическое, психологическое и воспитательное значение. Чтобы избежать вопросов экономии места и трудностей при чтении, мы предлагаем ставить знак :

• если только первая буква слова пишется с большой буквой, перед сло-

вом (поставить знак пишущейся в точках 4, 6).

• если все буквы слова пишутся с большими буквами, как например в аббревиатурах, (перед словом поставить знак пишущейся в точках 3, 5).

• если все буквы предложения пишутся с большими буквами, как например в заглавиях (перед первым словом поставить шеститочие – пишущееся в точках 1, 2, 3, 4, 5, 6)

SUMMARY
WHY VOLUNTARY CONCEDE IN WRITING?

E.H. Gevorgyan

Doctor of Philological Sciences, Professor at the Chair of Special Pedagogy and Psychology Khachatur Abovyan Armenian State Pedagogical University

In Armenian Braille system capital letters aren't used that leads confusions and semantic uncertainites. Besides, unlike ordinary words to write names of great people and secret places with capital letters has patriotic, psychological and educational value. To avoid questions of economy of a place and difficulties of reading, we suggest to put a sign:

- if only the first letter of the word is written with capital letter, before the word (to put a sign written in points 4, 6).
- if all letters of the word are written with capital letters, such as in abbreviations, (before the word to put a sign written in points 3, 5).
- if all letters of the offer are written with capital letters, such as in titles (before the first word to put the six points – written in points 1, 2, 3, 4, 5, 6).

ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԱՅ-ԿԱԿԱՆ ԵՎ ԼԵՀԱԿԱՆ ՓՈՐՁԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐ-ԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Մ. Գրիգման

Երեխաների վերականգնողական թերապիայի անկախ հասարակական կենտրոնի ղեկավար, նյարդալոգոպեդ, Հումանիտար գիտությունների դոկտոր, Կվիժին, Լեհաստան

Ա. Վ. Ավագյան

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պեդագոգական մանկավարժական համալսարանի հարուկ կրթության ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Հանգուցային բառեր և արտահայտություններ. այլընտրանքային զարգացնող հաղորդակցում (AAC), հաղորդակցման դժվարություններ ունեցող անձ, <<խոսող>> սարքեր, համեմատական վերլուծություն, ավանդական մեթոդներ, ռուսալեզու գրականություն

Վերջին տասնամյակում հաղորդակցման դժվարություններ ունեցող անձանց հետ աշխատանքում լայն կիրառում են ստացել հաղորդակցման զարգացման այլընտրանքային մեթոդները:

Այլընտրանքային լրացուցիչ հաղորդակցումը ժամանակակից միջազգային գրականության մեջ նշվում է AAC հապավմամբ (Augmentative and Alternative Communication). Այն իրենից ներկայացնում է մի կողմից խոսքի զարգացման հապաղմամբ երեխաների համար հաղորդակցման միջոց՝ քանի դեռ չի ձևավորվել բանավոր խոսքը, մյուս կողմից հաղորդակցմանը օգնող, լրացուցիչ մի-

ջոց՝ խոսքի խանգարումներով անձանց համար:

Հազվադեպ հանդիպում են խոսքի ծանր խանգարումներ (անարտոբիա, աֆազիայի ծանր դեպքեր, ալալիա), երբ հաղորդակցման միակ հնարավոր եղանակը այլընտրանքայինն է: Այդ դեպքերում AAC-ն հանդիսանում է հաղորդակցվելու, ցանկությունները, զգացմունքները, հույզերը, հետաքրքրությունները արտահայտելու այն միջոցը, որը մարդուն ուղեկցում է ողջ կյանքի ընթացքում (Avagyan A., 2013):

Այլընտրանքային հաղորդակցումը երկու դեպքերում էլ նպաստում է շրջապատողների հետ փոխհարաբերությունների զարգացմանը (Calculator S., Dollaghan C., 1982).

Հայաստանում և Լեհաստանում AAC-ի կիրառումն համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ այս ոլորտում կան որոշակի տարբերություններ, մասնավորապես.

Լեհաստանում AAC-ն լայնորեն կի-

րառվում է 1980-ականների վերջից: Հայաստանում այլընտրանքային հաղորդակցման մեթոդներն օգտագործվում են վերջին տասնամյակում և լայն տարածում դեռ չունեն:

Լոգոպեդական աշխատանքի ընթացքում, այլընտրանքային հաղորդակցման մեթոդներից, Հայաստանում առավել հաճախ կիրառվում է նկարների կամ խորհրդանիշների փոխանակմամբ հաղորդակցման համակարգերը: Լեհաստանում վերոնշյալ մեթոդների կողքին, լայնորեն կիրառվում են նաև համակարգչի ու «խոսող» սարքերի միջոցով հաղորդակցումը (Grycman M., 2011):

Հայաստանում հաղորդակցման այլընտրանքային միջոցները հիմնականում կիրառվում են աուտիզմ ախտորոշում ունեցող երեխաների հետ աշխատանքում: Լեհաստանում դրանք լայն կիրառում ունեն հաղորդակցման ցանկացած դժվարության դեպքում (աֆազիա, անարտրիա, ալալիա):

Հայաստանում, առավել հաճախ, լոգոպեդական աշխատանքի առաջնային նպատակը խոսքի ձևավորումն է, երկրորդային նպատակը՝ հաղորդակցման զարգացումը: Լեհաստանում, որպես կանոն, մասնագետների առաջնային նպատակը այցելուի հաղորդակցման զարգացումն է, իսկ երկրորդայինը, և նույնքան կարևորը, խոսք ձևավորելը:

Հայաստանում մասնագետները, որպես կանոն, աշխատում են ավանդական մեթոդներով և երկար ժամանակ են հատկացնում երեխաների էքսպրեսիվ խոսքի ձևավորմանն ու իմպրեսիվ խոսքի զարգացմանը: Արդյունքում բավականին զարգա-

նում է երեխայի իմպրեսիվ խոսքը. երեխան հասկանում է հրահանգները, մատնանշում է իրենից հարցվող ցանկացած առարկա, պատկեր, բայց բանավոր խոսքը սահմանափակվում է մի քանի բառերով ու ծայնարձակումներով, որոնք չափազանց քիչ են լիարժեք հաղորդակցման համար:

Լեհաստանում, հաղորդակցման դժվարությունների դեպքում մասնագետների կողմից իրականացվում է այլընտրանքային հաղորդակցման զարգացումը, առանց ժամանակ վատնելու ծայնարձակումներ ու խոսք ձևավորելու վրա: Փորձը ցույց է տալիս, որ հաղորդակցման զարգացման դեպքում երեխայի մոտ ավելի մեծ է լինում խոսելու ցանկությունը, պահանջումները և խոսքը ձևավորվում է ինքնաբերական կերպով:

Հայաստանում, մասնագետների կողմից հաղորդակցման զարգացման ժամանակակից տեխնոլոգիաների ոչ բավարար օգտագործումը պայմանավորված է.

1. մեթոդներին չտիրապետելով:
2. լոգոպեդական աշխատանքում խորհրդային և ռուսալեզու գրականության վրա հենվելով:
3. մասնագիտական վերապատրաստումների և լիցենզավորման անհրաժեշտության բացակայությամբ:
5. այլընտրանքային հաղորդակցման համար անհրաժեշտ պարագաների (օրինակ՝ հաղորդակցման գիրք) պատրաստման ժամանակատարությանը:
6. ծնողների այն մտավախությամբ, որ այլընտրանքային ձևով հաղորդակցվելու դեպքում երեխան չի

խոսի, որովհետև չի ունենա դրա կարիքը(Ավագյան Ա., 2012):

Վերհանված խնդիրները լուծելու նպատակով մեր կողմից իրականացվում է իրազեկող աշխատանք ծնողների հետ, նախատեսվում են վերապատրաստման դասընթացներ մասնագետների համար: Որպես առաջին քայլ, մասնագետներին ուզում ենք ներկայացնել հաղորդակցման կարողությունների հետազոտման մեր կողմից թարգմանված և ադապտացված քարտը:

Հաղորդակցման դժվարություններով անձանց հետազոտման ընթացքում լոգոպեդը պարզում է այցելուի խոսքի խանգարման տեսակը և իրականացնում է հաղորդակցական կարողությունների գնահատումը: Մասնավորապես.

- տվյալ անձի կողմից օգտագործվող հաղորդակցման միջոցները,

- փոխհարաբերություններ ստեղծելու կարողությունը, հաղորդակցման գործընթացը,

- հաղորդակցական կարողությունների բարելավման ու շտկման համար AAC համակարգի կիրառման նպատակահարմարությունը:

Հաղորդակցական կարողությունների գնահատման գործընթացը իրականացվում է բնական պայմաններում և գործունեության ընթացքում, ինչը համեմատաբար դժվար է իրագործել մեծահասակ այցելուներին դեպքում, քանի որ նրանց հաղորդակցական բնական պայմանները բավականին սահմանափակ են (Elder, Goosens 1994; Buzolich, Wiemann 1988; Glennen 1998):

Հետազոտության տվյալները լրացվում են ներքոնշյալ հետազոտման քարտում և վերլուծվում մասնագետի կողմից:

Հաղորդակցման կարողությունների հետազոտման քարտ						
<i>Լրացման ձևը:</i>						
Լրացնել աղյուսակի դատարկ սյունակները:						
Հետազոտությունը անցկացնել 30 րոպե տևող գործունեության/խաղի ընթացքում: Աղյուսակի համապատասխան սյունակում կատարել համապատասխան նշում:						
Հաղորդակցման միջոցներ						
Հաղորդակցվելու անհրաժեշտությունը	Բառերով կամ ձայնարձակումներով	Հայացքով	Ժեստերով կամ դիմախաղով	խորհրդանիշները/նկարները մատնացույց անելով	դիդակտիկ սյուրետերով կամ ժամանակակից տեխնոլոգիաներով	Այլ
Ինչպե՞ս է խնդրում որևէ առարկա:						

Ինչպե՞ս է հարցեր տալիս:						
Ինչպե՞ս է պատասխանում հարցերին:						
Ինչպե՞ս է դիմում, իր վրա ուշադրություն հրավիրում:						
Ինչպե՞ս է մեկնաբանություններ անում:						
Ինչպե՞ս է արտահայտում հույզերը, առարկությունը:						

Աղբյուր՝ S. L. Glennen, D. C. De-Coste 1998, s. 165 (թարգմանությունը և հարմարեցումը Մ. Գրիգմանի, Ա.Ավագյանի):

Հետազոտական քարտով այցելուի հաղորդակցման կարողության և հաղորդակցական հնարավորությունների գնահատուման արդյունքում մասնագետը կարող է յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ընտրել հաղորդակցման զարգացման այլընտրանքային կոնկրետ միջոց. ժեստեր, նկարների փոխանակում (PEC-

S-Picture Exchange Communication System), սիմվոլներ, տեխնիկական միջոցներ, <<խոսող>> սարքերը և այլն:

Ստացված տվյալների վերլուծությունը լոգոպեդին թույլ է տալիս որոշել և պլանավորել միջամտության հաջորդական քայլերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավագյան Ա. Նկարների միջոցով հաղորդակցման համակարգ. հաճախ տրվող հարցեր, Մանկավարժական միտք, -2012, N3-4, էջ 153-158

2. Avagyan A. The usge of Alternative Communication with Autistic Children: Armenian Experience, World Psychiatric Association Thematic Conference "Mental Helth and Mental Illness: Focusing on Eurasia", Yerevan, 2013, S35

3. Buzolich M., Wiemann J. Turntaking in Atypical Conversations: The Case of the Speaker/Augmentated Communicator Dyad, „Journal of Speech and Hearing Research”, 1988, No. 31, s.3-18.

4. Calculator S., Dollaghan C. *The Use of Communication Boards in a Residential Setting: An Evaluation*, „Journal of Speech and Hearing Disorders”, 1982, No. 47, s. 281-287.

5. Calculator S., Luchko C., Evaluating the Effectiveness of a Communication Board Training Program, „Journal of Speech and Hearing Disorders”, 1983 No. 48, s.185-199.

6. Elder P., Goosens C. Engineering Training Environments for Interactive Augmentative Communication, Southeast Augmentative Communication Conference Publications Clinician Series, Birmingham, 1994.

7. Glennen S.L. Augmentative and Alternative Communication in: G. Church, S.L. Glennen, *The Handbook of Assistive Technology*, Singular Publishing Group, San Diego, 1992.

8. Grycman M., *Program wspomagania kompetencji komunikacyjnej dzieci z ciężkimi zaburzeniami porozumiewania się – Ciągi czynności, gry i zabawy, Jedzenie, Emocje Toruń*, 2011

РЕЗЮМЕ
СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ АРМЯНСКОГО И ПОЛЬСКОГО ОПЫТА ИСПОЛЬЗОВАНИЯ АЛЬТЕРНАТИВНОЙ КОММУНИКАЦИИ

М. Грицман

Председатель независимого общественного центра лечения и реабилитации детей, нейрологопед, доктор гуманитарных наук Квидзын, Польша

А. В. Авакян

*Декан факультета специального образования Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна
кандидат педагогических наук, доцент*

В статье представлена совместно разработанная и адаптированная карта обследования навыков коммуникации у людей с нарушением речи, проведен сравнительный анализ логопедической работы методами ААС в Армении и в Польше.

По мнению авторов в Армении ме-

нее распространено использование альтернативных технологий развития коммуникации. В статье перечислены предполагаемые причины недостаточной распространенности использования новейших технологий, а также представлены рекомендации для их более широкого применения.

SUMMARY
COMPARATIVE ANALYSIS OF ARMENIAN AND POLISH EXPERIENCE OF ALTERNATIVE COMMUNICATION APPLICATION

M. Grycman

Head of the Independent Public center of child treatment and rehabilitation, Neurospeech therapist, Doctor of humanitarian sciences Kwidzyn, Poland

A.V. Avagyan

*Dean of the Faculty of Special Education Khachatur Abovyan
Armenian State Pedagogical University, Candidate of Pedagogical Sciences,
Associate professor*

Jointly developed and adapted card for studying communication skills of people with speech disorders is introduced in the article, comparative analysis of speech therapy with the application of AAC methods in Armenia and Poland was carried out.

According to the authors, the ap-

plication of alternative technologies of communication development is less common in Armenia. The supposed causes of this phenomenon are mentioned in the article, and recommendations are introduced for the extension of up-to-date technologies.

**ՀՀ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ԴՊՐՈՑՆԵՐԻ ՓՈՐՁԸ, ՈՒՍՈՒՑՉԻ ԴԵՐԸ ԵՎ
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՆՓՈՓՈՒՄԸ**

Մ. Ռ. Հարությունյան

Խաչատրուր Աբովյանի անվան հայկական պեդագոգական մանկավարժական համալսարանի լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու

Հանգուցային բառեր և արտահայտություններ. ներառական կրթություն, ուսուցիչ, կրթական համակարգ, կրթական առանձնահատուկ կարիքներ:

Այսօր աշխարհում ապրում է մտավոր կամ ֆիզիկական հաշմանդամություն ունեող մոտ կես միլիարդ մարդ [1]: Այդ անձինք հաճախ սահմանափակված են ինչպես ֆիզիկական, այնպես էլ սոցիալական արգելքներով, որոնք մեկուսացնում են նրանց հասարակությունից և հնարավորություն չեն տալիս ակտիվ մասնակցություն ունենալ հասարակական կյանքում: Առկա իրավիճակը փոխելու համար անհրաժեշտ է կրթել հասարակությանը՝ սերմանելով հարգանք բոլոր մարդկանց իրավունքների հանդեպ: Այս տեսանկյունից կարևոր է ներառական կրթություն հասկացության ըմբռնումը: Այն իրենից ներկայացնում է մի գործընթաց, որը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին տալիս է դպրոցում կրթվելու հնարավորություն: Այն արձագանքում է բոլոր սովորողների բազմազան կարիքներին, ապահովում է նրանց մասնակցությունը ուսումնական, մշակութային և համայնքային կյանքին: Ներառական կրթությունը ենթադրում է փոփոխություններ և բարեփոխումներ կրթության բովանդակության մեջ, մոտեցումներում, կառույցներում և մեթոդներում, տարածվում է համապատասխան տարիքային խմբի բոլոր երեխաների վրա, և հենված է այն համոզմունքի վրա և պայմանավորված է այն համոզմունքներով, որ բոլոր երեխաներին կրթելը հանրակրթության համակարգի պարտականությունն է [4, էջ՝ 596]:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսումնառությունը կազմակերպելու նպատակով Հայաստանի հանրապետությունում այսօր գործում են այնպիսի դպրոցներ, որոնք իրականացնում են ներառական կրթություն: Այն հնարավորություն է տալիս ֆիզիկական կամ մտավոր զարգացման խնդիրներ ունեցող երեխաներին լիարժեքորեն ինտեգրվել հասարակության մեջ՝ բավարարելով վերջիններիս կարիքները:

Ներառական կրթության զարգացման ժամանակակից փուլում իրականացվում են հայեցակարգային մոտեցումների վերանայումներ՝ բարձրացնելու համար զարգացման խանգարումներ ունեցող երեխաների հետ իրականացվող կրթադաստիարակչական աշխատանքների արդյունավետությունը:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ ամբողջ աշխարհում հաշմանդամ երեխաները կազմում են զգալիորեն խոցելի խումբ, և անհրաժեշտ է գիտակցել, որ այս երեխաների համար պետք է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնց առկայության դեպքում, չնայած որոշակի սահմանափակումների, երեխան կկարողանա կրթություն ստանալ, հնարավորինս ինքնուրույն լինել և ներգրավվել հասարակության մեջ. Ներառական կրթություն իրականացնող դպրոցների գեկինդիոները կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառումն է հանրակրթության մեջ՝ ապահովելու համար նրանց մասնակցությունը հասարակական կյանքում:

2013 թ. սեպտեմբերից Հայաստանի Հանրապետությունում գործում են 117 ներառական կրթություն իրականացնող դպրոցներ: 2014 թվականից ներառական կրթություն իրականացնող դպրոցներում արդեն սովորում են շուրջ 3000 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ: Պետբյուջեով 1 ուսումնական տարվա կրթության կազմակերպման համար յուրաքանչյուր աշակերտին տրամադրվում է մոտ 490.000 դրամ [5]:

Օրինակ, 2011 թվականից Տավուշի մարզում իրականացվում է համընդհանուր ներառման փորձնական ծրագիր, և գործում է հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսավորման փորձնական կարգ:

Յուրաքանչյուր տարի ՀՀ կրթության և գիտության նախարարի տվյալ տարվա հրամանով ներառական կրթություն իրականացնող ճանաչված հանրակրթական դպրոցների մանկավարժական կազմը վերապատրաստվում է: Այս տարի նախատեսվում է վերապատրաստումներ կազմակերպել հանրապետության 18 դպրոցներում [6]: Այս հանգամանքը իսկ փաստում է, որ ուսուցիչն առաջատար դեր ունի այս համակարգում:

Ֆլորիանը և Ռուսը (2008) նշում են, որ “Յուրաքանչյուր ուսուցիչ խնդիրն է նախապատրաստել մարդկանց՝ մուտք գործելու կյանք և մասնագիտական ոլորտ: Սա անհատական և կոլեկտիվ պատասխանատվություն է պահանջում բարելավելու համար բոլոր երեխաների կրթության գործընթացը և ապահովելու մասնակցությունը” [3, էջ՝ 556]:

Ներառական կրթության հիմնական գործընթացը ենթադրում է, որ հանրակրթական դասարանի ուսուցիչն ունի որոշակի գիտելիքներ և պատկերացում տարբեր ունակություններով և կարողություններով սովորողների կարիքների մասին, ծանոթ է նրանց կրթության մեթոդներին և ուսումնական պլանների

ռազմավարությանը: Այս տեսանկյունից՝ ուսուցիչը կարևորագույն դեր է խաղում կրթության որակի ապահովման հարցում, և ամենից շատ ուսուցիչ որակով է պայմանավորված սովորողի հաջողությունը, քան որևէ այլ գործոնով՝ ներառյալ դասարանական միջավայրի պայմանները:

Անառարկելի է, որ ներառական կրթությունը հատուկ կարիքներով երեխաների համար առավել ամենանախընտրելի մոտեցումն է: Պարզ է, որ հատուկ կարիքներով երեխաները պետք է կրթություն ստանան հանրակրթական կառույցներում՝ իրենց ունակություններին և կարողություններին համապատասխան, և չպետք է մեկուսացվեն հատուկ դպրոցում, քանզի կրթությունն այնտեղ չի կարող առաջընթաց ապահովել՝ անգամ լինելով հագեցված բոլոր համապատասխան նյութերով, մեթոդներով և ծառայություններով [2, էջ՝ 6]:

Այս իմաստով ուսուցիչների դերը հատուկ կարիքներով երեխաներին ոգևորելն է, նրանց ընտրություն կատարելը, որքան հնարավոր է լինել ազատ, սովորել մանուկների միջավայրում և հաջողություններ ունենալ: Ուսուցիչները խթանում են այս երեխաների ուսումնական գործունեությունը՝ ուղղորդելով, ոգևորելով նրանց, համագործակցելով և փորձելով կիրառել ուսուցման արդյունավետ մեթոդներ, որոնք նախատեսված են տարբեր ուսումնական ոճերի համար և մատչելի են դարձնում աշակերտի ինքնուրույն գործունեությունը: Ակնհայտ է, որ ներառական դպրոցում հատուկ կարիքներով երեխաների հետ աշխա-

տող ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման գործընթացները փոփոխություններ են կրում:

Ներառական կրթությունը, լինելով կրթության “երիտասարդ” համակարգ, Հայաստանում դեռևս լիովին ձևավորված չէ: Լիակատար ձևավորման համար առկա են որոշակի բացթողումներ: Այսօր ներառական կրթություն իրականացնող մի շարք դպրոցներում դեռևս ընդգրկված չեն համապատասխան որակավորում ստացած մասնագետներ: Իսկ այն դպրոցներում, որտեղ աշխատում են համապատասխան մասնագետներից բաղկացած խումբ, չեն ստանում անհրաժեշտ վերապատրաստում:

Ցավոք, այսօր ներառական կրթություն իրականացնող դպրոցներն ունեն մի շարք խնդիրներ, որոնցից են՝

- Ֆիզիկական անհրաժեշտ պայմանների բացակայությունը և առկա միջավայրի հարմարեցումը (թեքահարթակներ, դասասենյակների համապատասխան լուսավորվածություն. Խաղասենյակների առկայություն, հարմարեցված կահույք և սանհանգույցներ, և այլն);
- տեխնիկական սարքավորումների պակասը (էխո-համակարգեր, հատուկ ծրագրերով հագեցած համակարգիչներ և այլն);
- աշակերտների կրթական կարիքներին համապատասխան պարագաների (մեծ տառաչափերով գրքեր և տետրեր, բառապաշարը հարստացնող, ճանաչողությունը զարգացնող խաղեր, համապատասխան գրքեր, ձեռնարկներ)

բացակայությունը կամ սակավությունը;

- դպրոցում բազմամասնագիտական թիմի առկայությունը;
- իրազեկվածության պակասը (հաշմանդամության մասին հիմնավոր գիտելիքներ, ճիշտ մոտեցում, խտրականության վերացում, սոցիալականացման ապահովում):

Իհարկե այս ամենով չեն սահմանափակվում ներառական կրթություն իրականացնող դպրոցների հիմնախնդիրները, սակայն վերջիններիս լուծումը կնպաստի կրթության որակի կտրուկ բարձրացմանը: այս ոլորտում դեռևս անելիքները շատ են, քանի դեռ մասնավորապես հասարակությունը համարում է, որ հաշմանդամություն ունեցող երեխան հիվանդ է, կարեկցության արժանի, չի կարող սովորել հանրակրթական դպրոցում, քանի դեռ շատ ծնողներ դեմ են իրենց երեխայի կողքին տեսնել հաշմանդամություն ունեցող երեխային, քանի դեռ կա թերահավատություն և անտեղյակություն ներառական կրթության հնարավորության նկատմամբ, քանի դեռ ու-

սուցիչները բավարար չափով իրազեկված և վերապատրաստված չեն ներառական կրթության ուղղությամբ ու քանի դեռ մանկավարժական բուհերը կարիք ունեն մեթոդաբանության հզորացմանը, որի հիմքում ընկած է բուհական կրթության տարիներին ստացած սակավաժամ գործնական ուսուցումը: Այնուամենայնիվ, ներառական կրթությունը Հայաստանում ունի տասնամյակի պատմություն, և զգալի առաջընթացը նկատելի է: Այսօր գրեթե բոլոր մարզերում, ինչպես նաև Երևան քաղաքում իրականացվում է «Կրթություն բոլորի համար» ծրագիրը, որն էլ նպաստում է երեխաների և մեծահասակների հումանիստական դաստիարակությունը: Այս կրթության ձեռքբերումներից է նաև այն, որ խթանվում է կրթության որակի բարձրացումը, ամրակայվում է ուսուցման անձնակողմնորոշվածությունը, երեխաների պահանջմունքների ճանաչումն ու կրթության գործընթացում դրանց բավարարումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Առողջապահության Համաշխարհային Կազմակերպություն, 2001, <http://www.who.int/countries/arm/en/>:
2. Allen, K. E., Schwartz, I. S. (2001) The exceptional child: Inclusion in early childhood education. Albany, NY: Delmar, 27.
3. Florian, L., Rouse, M. (2009) The inclusive practice project in Scotland: Teacher education for inclusive educa-

- tion. Teaching and Teacher Education, 25 (4), 594-601.
4. Leatherman, J., M. (2007) "I just see all children as children": Teachers' perception about inclusion, The Qualitative report Vol. 12 (4), 594-611.
5. www.disabilityinfo.am
6. www.edu.am

РЕЗЮМЕ

ОПЫТ ШКОЛ ОСУЩЕСТВЛЯЮЩИХ ИНКЛЮЗИВНОЕ ОБРАЗОВАНИЕ В РА, РОЛЬ УЧИТЕЛЯ И ОБОБЩЕНИЕ ПРОБЛЕМ СИСТЕМЫ

М. Р. Арутюнян

преподаватель кафедры логопедии и восстановительной терапии Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна, кандидат педагогических наук

В статье проанализирован опыт школ, осуществляющих инклюзивное образование в Армении, представлена ведущая роль учителя в процессе обучения детей с разными образователь-

ными нуждами в инклюзивной системе. Анализируются и представляются также проблемы, существующие в системе и требующие своего решения.

SUMMARY

EXPERINCES OF SCHOOLS PROVIDING INCLUSIVE EDUCATION IN RA, TEACHER'S ROLE AND SUMMARY OF EXISTING PROBLEMS

M. R. Harutyunyan

Lecturer at the Chair of Speech and rehabilitation therapy, Khachatur Abovyan Armenian State Pedagogical University, Candidate of Pedagogical Sciences

The experience of schools providing inclusive education in Armenia is analyzed in the article. The leading role of

teacher is outlined and presented. The existing problems of inclusive system are summarized and discussed here.

**ՄՊՈՐՏԱՅԻՆ ՄԱՐԶՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՄԱՐՄՆԻ ԿԵՆՍԱԷԼԵԿՏՐԱԿԱՆ
ԴԻՄԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՈՎ**

Ա.Լ. Շալջյան

Մխիթար Հերացու անվան հայկական պետական բժշկական համալսարանի կենսաքիմիայի ամբիոնի դոցենտ, կենսաբանական գիտությունների թեկնածու

*Մ.Ս. Գրիգորյան
Զ.Մ. Միրիջանյան
Ա.Ս. Օհանջանյան*

*Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի
կինեզիոլոգիայի ամբիոնի դասախոսներ*

Հանգուցային բառեր և արտահայտություններ. գործառույթային վիճակ, կենսաէլեկտրական դիմադրողականության վերլուծություն, ինտեգրալ, երկհաճախականության իմպեդանստմետրիա, մարմնի ինտեգրալ ռեոգրաֆիա:

Բուժական մարմնամարզության մասնագետներին և մարզիչներին հուզող հրատապ հարցերից մեկը հանդիսանում մարզողական միջոցառումների արդյունավետության գնահատումն է:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտային պարապմունքները, ինչպես նաև ցանկացած այլ ֆիզիկական գործունեության տեսակ գիտակցված վարքային գործողություն են: Օրգանիզմի գործառույթային և սպորտային վարպետության կատարելագործման հնարավորությունների ուսումնասիրման ժամանակ

սպորտային գործունեությունը և առողջարարական մարմնամարզության պարապմունքներն անհրաժեշտ է դիտարկել ինչպես համալիր վարքային ռեակցիաների, այնպես էլ ի պատասխան կանոնավոր ֆիզիկական բեռնվածությանը, օրգանիզմի ադապտիվ ռեակցիաների տեսանկյունից:

Մարդու գործառույթային վիճակի վերլուծությունը և գնահատումը որոշիչ դեր ունեն մարզողական գործընթացի պլանավորման, մասնավորեցման և բեռնվածության չափավորման մեջ, առանց որի հնարավոր չէ հասնել ցանկալի արդյունքների:

Սպորտային բժշկության մեջ մարդու գործառույթային ախտորոշումը, որի բաժիններն ունեն էական ուսումնասիրության կարիք: Սպորտում գործառույթային ախտորոշման գլխավոր և ժամանակակից խնդիրներից է մարզելու ազդեցությունը

օրգանիզմի վեգետատիվ գործառույթների վրա՝ ներառելով բարձր ֆիզիկական բեռնվածություն: Ինչ վերաբերում է առողջարարական ֆիզկուլտուրային, ապա օրգանիզմի սիրտ անոթային և շնչառական համակարգերի գործառույթային վիճակի օբյեկտիվ տվյալներ ստանալու անհրաժեշտ պայման է առողջարարական և բուժական մարմնամարզության միջոցների չափավորված և նպատակաուղղված կիրառումը:

Այս կապակցությամբ կարևորություն է ձեռք բերում մարզիկի գործառույթային վիճակի գնահատման այնպիսի մեթոդը, որը թույլ կտար մի կողմից արագ վերահսկել մարզողական գործընթացի արդյունավետությունը, մյուս կողմից՝ կօգներ բուժառողջարարական մեթոդների ընտրության և դրանց արդյունավետության գնահատման հարցերում:

Դրա հետ մեկտեղ, կարևոր է օրգանիզմի գործառույթային վիճակի գնահատման համար կիրառվող մեթոդների և միջոցների տեղեկատվության մակարդակը:

Վիճակի հետազոտության անառարկելի առավելությունը, զուգահեռ գրանցվող մի շարք ցուցանիշները կարող է իրագործվել տարբեր աստիճանով՝ պարզմանավորված դրանց ընտրության և կիրառման հնարավորություններով: Ընդհանուր առմամբ՝ ընտրված ցուցանիշների քանակը որոշվում է որոշակի վիճակում տվյալ գործառույթային համակարգի ներկայանալի արտահայտվածության համար անհրաժեշտության և բավարար քանակության օրենքով: Այս դեպքում կարևոր է հետազոտության մեջ ընդգրկել գլխավոր փոփո-

խական, այսինքն՝ ըստ նշանակության ցուցանիշներ (ըստ մեծության, օրգանիզմի համար նշանակության), որոնք իրենց իմաստը փոխում են որոշակի համակազմի համար՝ հետազոտության որոշակի պայմաններում:

Սպորտային բժշկության պրակտիկայում օրգանիզմի տարբեր համակարգերի գործառույթային վիճակի գնահատման ոչ ինվազիվ է համարվում ընտրության մեթոդը:

Մարզիկի գործառույթային վիճակի հետազոտության մեթոդներին ներկայացվում են բազմաթիվ, երբեմն փոխադարձաբար բացառող պահանջներ: Դրանց խմբին են դասվում՝ զննվողի անվտանգությունը, մեթոդական և տեխնիկական պարզությունը, կենսաֆիզիկական հիմնավորումը, չափումների հաճախակի կրկնողությունների հնարավորությունը ցանկացած պայմաններում (այդ թվում՝ էքստրեմալ), արդյունքների բարձր վերարտադրումը:

Հետազոտության գործողությունները չպետք է ազդեն չափվող ցուցանիշի վրա:

Այդ մեթոդներից մեկը կենսաէլեկտրական դիմադրողականության վերլուծությունն է:

Այս վերլուծության էլեկտրական և կենսաբանական իմաստը մարդու օրգանիզմի հյուսվածքների կամ հեղուկների դիմադրողականության (իմպեդանսի) չափման մեջ փոփոխական հոսանքով տարբեր հաճախությամբ առաջ և հետո ազդելին է: Նախնական հոսանքի կիրառման հաճախությունը տատանվում է սկսած 1-5-ից մինչև 500 և բարձր կչց է:

Հետազոտությունը անց է կացվել համակարգչայնացված ապարատածրագրավորված համալիրի «Диамант - РКСМ» վրա՝ կարդիո-ռեսպիրատոր համակարգի, մարմնի զանգվածի կազմության, մարդու օրգանիզմի հյուսվածքների հիդրատացիայի հետազոտությունների համար:

«Диамант - РКСМ» համալիրը կազմված է զուգահեռ միացված մի շարք սարքերից (ռեո-, կարդիո-, սպիրո-, վերլուծիչներ և կարդիո-ռեսպիրատոր մոնիտոր) ինչը թույլ է տալիս գործառնականորեն հստակ ժամանակի մեջ գնահատել օրգանիզմի հիմնական սոմատո-վեգետատիվ համակարգի գործառնության վիճակը հետևյալ հետազոտական մեթոդների օգնությամբ՝

- ինտեգրալ երկհաճախության իմպեդանսոմետրիա, որը կիրառվում է օրգանիզմում ջրի, ճարպի, ոչ ճարպային և բջջային զանգվածը հայտնաբերելու համար

- էլեկտրասրտագրություն 12 միանման արտածումներում

- մարմնի ինտեգրալ ռեոգրաֆիա, որը կիրառվում է սիրտ անոթային և շնչառական համակարգի գործառնության հետազոտման համար. Հիմնականում՝ հարվածային ինդեքսը, սրտային ինդեքսը, սրտի կծկումների հաճախությունը, պահեստային գործակիցը, արյան շրջանառության տի-

պերը (հիպեր-, հիպո-, և նորմոկինետիկ) որոշելու համար

- հոսք-ծավալ հանգույց

- սպիրոգրաֆիա

- թոքերի առավելագույն օդափոխություն

Արտասահմանյան տարբեր հետազոտողների տվյալները նույնպես վկայում են այդ մեթոդների օգտագործման հնարավորության մասին:

Նկարագրված մեթոդը հիմնված է յուրաքանչյուր էֆֆեկտորի արդյունավետության շարժնթացի անմիջական վերլուծության վրա՝ հաշվի առնելով դրանց պահեստային հնարավորությունների հավասարակշռությունը, որոնց տարբերությունները մարդկանց դեպքում գերծանրաբեռնվածության պայմաններում արտահայտվում են ինչպես արդյունավետության այնպես էլ հավասարակշռության տարաբնույթ ցուցանիշների ձևով:

Գլխավորն այն է, որ դիտարկվող մեթոդն ապահովում է համակարգի գործառնության աշխատունակության անմիջական չափումը, և ոչ թե ստացված ցուցանիշների միջինացված տվյալները: Միաժամանակ մեթոդն ապահովում է ընտրության հնարավորություն և տարբեր կառավարող ազդակների լավագույն ռեժիմի ընտրությունը օրգանիզմի վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Комплексная оценка функционального состояния систем кровообращения и дыхания методом интегральной реографии тела. Метод. рекомен. МЗ РСФСР. Составители: Волков Ю.Н., Большов В.М., Сингаевский С.Б., Земцовский Э.В., Гуссейнов Б.А. М., 1989. 21С.

2. Селуянов В.Н., Мякинченко Е.Б., Тураев В.Т. Биологические закономер-

ности в планировании физической подготовки спортсменов. //Теория и практика ФК – 1993, № 7, с. 29-33.

3. R. Gudivaka, D.A.Schoeller, R.F. Kushner, and M.J.G. Bolt. Single- and multifrequency models for bioelectrical impedance of body water compartments. American Physiological Society.: 1087-1096, 1999

РЕЗЮМЕ

ОЦЕНКА ЭФФЕКТИВНОСТИ СПОРТИВНОЙ ТРЕНИРОВКИ МЕТОДОМ БИОИМПЕДАНСНОГО АНАЛИЗА

А.Л. Шалджян

доцент кафедры биохимии Армянского государственного медицинского университета имени Мхитара Гераци, кандидат биологических наук

М.С.Григорян, З.М.Мириджанян, А.С.Оганджян

преподаватели кафедры кинезиологии Армянского государственного института физической культуры

Одной из наиболее актуальных проблем интересующих сегодня тренеров и методистов по лечебной физкультуре является оперативная оценка эффективности проводимых тренировочных мероприятий.

Анализ и оценка функционального состояния человека играют решающую роль при планировании тренировочного процесса и его строгой индивидуализации, определении оптимума нагрузки, без чего невозможно достижение желаемых результатов.

В связи с этим особую важность приобретает проблема использования такого метода определения функционального состояния спортсмена, который помог бы с одной стороны чутко контролировать продуктивность тренировочного процесса, а с другой стороны помог бы в выборе лечебно-

оздоровительных методов и в оценке их эффективности.

Одним из таких методов является биоэлектрический импедансный анализ (БИА).

Электрический и биологический смысл этого анализа заключается в измерении сопротивления (импеданса) собственных тканей или жидкостей организма до и после воздействия переменным током с различной частотой.

Исследование проводилось на компьютеризированном аппаратно-программном комплексе «Диамант-РКСМ», для исследования кардиореспираторной системы, состава массы тела и гидратации тканей организма человека. Главное заключается в том, что метод обеспечивает непосредственное измерение уровня функциональной работоспособности системы.

SUMMARY
ASSESSMENT OF EFFICIENCY OF SPORTS TRAINING BY THE METHOD
OF THE BIOIMPEDANCE ANALYSIS

A.L.Shaljyan

*Associate professor at the Chair of biochemistry Mkhitar Heraci Yerevan
State Medical University, Candidate of Biological sciences*

M.S.Grigoryan, Z.M.Mirijanyan, A.S.Ohanjanyan,

*Lecturers of the Chair of Kinesiology
Armenian State Institute of Physical Culture*

One of the most actual problems of trainers and methodologists on physiotherapy exercises interesting today is the operative assessment of efficiency of carried-out training actions.

The analysis and assessment of a functional condition of the person play a crucial role when planning training process and its strict individualization, definition of an optimum of loading without what achievement of desirable results is impossible.

In this regard special importance is gained by a problem of use of such method of definition of a functional condition of the athlete which would help to supervise sensitively on the one hand efficiency of training process, and on the other hand would help with a choice of

medical and improving methods and in an assessment of their efficiency.

One of such methods is the bioelectrical impedance analysis (BIA).

The electric and biological sense of this analysis consists in measurement of resistance (impedance) of own tissues or organism liquids before and after influence by an alternating electrical current of various frequency.

Research was carried out on the computerized hardware-software Diamant-RCSM complex, for research of cardio-respiratory system, structure of weight of a body and hydration of fabrics of a human body. The main thing is that a method provides direct measurement of level of functional operability of system.

ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐՈՎ ԵՐԵՒԱՆԵՐԻՆ ՑՈՒՑԱԲԵՐՎՈՂ ՎԱՂ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

Լ. Հ. Սարափիկյան

Խաչատուր Աբովյանի անվան հայական պետական մանկավարժական համալսարանի հատուկ հոգեբանության և մանկավարժության ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու

Լ. Ն. Բալաբեկյան

«Պատմոս- Արարատ» բարեգործական հիմնադրամի լոգոպեդ

Հանգուցային բառեր և արտահայտություններ. լսողության խանգարում, լսողության վաղ պրոթեզավորում, խխունջային ներպատվաստում, լսողական ընկալում, առարկայական գործունեության զարգացում, սուրդոմանկավարժական վաղ օգնություն:

Հայտնի է, որ լսողության խանգարումները դժվարեցնում են մարդու սոցիալականացումը և խոչընդոտում ինքնուրույն կյանքի ու գործունեության կայացմանը: Դրանք բազմաթիվ սցիալ-հոգեբանական և մանկավարժական խնդիրներ են առաջացնում ոչ միայն երեխաների, այլև՝ նրանց ծնողների համար: Լսողության խանգարումները բացասաբար են անդրադառնում երեխայի խոսքի և հաղորդակցական պահանջմունքների ձևավորման ու զարգացման գործընթացների, ճանաչողության և գործունեության բոլոր ձևերի (մանիպուլացիոն, առարկայական, խաղային, ուսումնական, աշխատանքային) վրա: Այդ պատ-

ճառով էլ լսողության խանգարման և դրա հետևանքով առաջացած հոգեկան զարգացման երկրորդային շեղումների վաղ բացահայտումն ու օգնության կազմակերպումը կենսական կարևոր նշանակություն ունեն [1,3]: Նշված հարցերի կարևորությունն առավել ընդգծվում է, երբ դրանք վեաբերում են լսողության խանգարումներ ունեցող մինչև երեք տարեկան երեխաների հետ ընտանիքում կազմակերպվող սուրդոմանկավարժական աշխատանքներին: Սուրդոմանկավարժական վաղ օգնության ներդրումն ընտանիքում ընձռում է շտկող-զարգացնող աշխատանքերը մինչ 3 տարեկանը, կազմակերպելու հնարավորություն, հենվելով խոսքի զարգացման բոլոր փուլերի և սենզիտիվ շրջանների վրա, աշխատելով երեխայի համար բնական միջավայրում և մասնակից դարձնելով ծնողներին: Հիմք ընդունելով այն, որ նման մոտեցումը սուրդոմանկավարժության մեջ նորույթ է, կարծում ենք, որ այն կարևոր գի-

տահետազոտական հիմնախնդիր է և բազմակողմանի ուսումնասիրության կարիք ունի [4, 6]:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոհիշյալը՝ մեր նպատակն է կազմակերպել, իրականացնել և հետազոտել, լսողության խանգարումներ ունեցող երեխաներին ընտանիքում վաղ օգնությունը: Այս նպատակով առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել հետազոտվող խնդրի լուսաբանվածության աստիճանը՝ մասնագիտական գրականության մեջ,
- հետազոտել վաղ օգնության վերաբերյալ լսողության խանգարումներ ունեցող երեխաների ծնողների տեղեկացվածության մակարդակը,
- նրանց հաղորդել մասնագիտական որոշակի գիտելիքներ և ձևավորել համապատասխան պատկերացումներ հետազոտվող խնդրի վերաբերյալ,
- հիմնավորել վաղ տարիքում լսողության խանգարում ունեցող երեխաների և նրանց ծնողների հետ տարվող սուրդոմանկավարժական և հոգեբանական աշխատանքների կարևորությունը [2,5]:

Մասնագիտական գրականության վերլուծությունը ցույց է տվել, որ սուրդոմանկավարժական վաղ օգնության աշխատանքները բոլոր տարիքներում էլ կարևորվում են, սակայն դրանք առավելապես վերաբերում են 3 տարեկանից հետո սկսվող մասնագիտական միջամտությանը: Ինչ վերաբերում է ընտանիքում ներդրվող վաղ օգնության ձևերին, ապա դրանց վերաբերյալ

տեսագործնական հետազոտությունները բացակայում են [1,3,5]:

Այսօր մեր երկրում լսողության խանգարումներն ախտորոշվում են երեխայի ծնվելուց քառասունութ ժամ հետո: Այս հանգամանքն առավել դյուրին է դարձնում լսողության խանգարումներ ունեցող երեխաներին վաղ օգնության կազմակերպումը, որն անհնար է պատկերացնել առանց սուրդոմանկավարժական միջամտության: Ելնելով նրանից, որ վաղ օգնության կազմակերպման համար ամենաբարենպաստ պայմանները հնարավոր է ստեղծել ընտանեկան միջավայրում՝ մենք ուսումնասիրել ենք վաղ օգնության վերաբերյալ լսողության խանգարումներ ունեցող երեխաների ծնողների տեղեկացվածության մակարդակը:

Այս հետազոտությունները ցույց են տվել, որ նրանց 65%-ը վաղ օգնության մասին հստակ տեղեկատվություն ունի, սակայն հստակ չի պատկերացնում, թե ինչպես է այն կիրառվում գործնականում, 25%-ը մասամբ է տեղեկացված և խիստ թերահավատորեն է վերաբերում սուրդոմանկավարժական աշխատանքներին ընտանիքի մասնակցությանը, իսկ ծնողների 10%-ը պատկերացում չունի, թե ինչ է վաղ օգնությունն այս հարցում:

Ծնողների շրջանում անցկացրած հարցումները վկայում են, որ ընտանիքի այս գործընթացին ճիշտ կազմակերպված մասնակցությունն անմիջականորեն ազդում է վաղ սկսված սուրդոմանկավարժական աշխատանքների արդյունավետության վրա. այն ընտանիք-

ները, որոնք հետևողականորեն են, որ երեխան լսողական սարքը կրի, ապահովում են ընտանեկան ջերմ մթնոլորտ, սուրդոմանկավարժական աշխատանքներում դրական արդյունքներ են գրանցվում: Ելնելով այս ուղղությամբ իրականացրած հետազոտության արդյունքներից կարելի է ընդհանրացնել, որ առավելապես այն ընտանիքներում են գրանցվում լսողությա խանգարումներ ունեցող երեխայի զարգացման լավագույն ելքերը, որտեղ՝

- ընտանեկան դաստիարակության ընթացքում լսող և չլսող երեխաների միջև տարբերություններ չի դրվում,
- լսողության զարգացման համար օգտագործվում է երեխայի կյանքի յուրաքանչյուր պահը,
- վաղ օգնության ուղղությամբ իրականացվող աշխատանքներում ընդգրկվում են ընտանիքի բոլոր անդամները,
- անկախ նրանից՝ երեխան ընկալում է լսած խոսքն ամբողջությամբ, թե՛ ոչ, միշտ նրա հետ խոսում են նորմալ տեմպով և ձայնով:
- երեխաներին օրվա մեջ շատ ժամանակ են տրամադրում:

Այսպիսով, լսողության խանգարումներ ունեցող երեխային ցուցաբերվող վաղ օգնության կազմակերպումն ընտանիքում իրականացվում է հետևյալ ուղղություններով՝


- զրույց ընտանիքի անդամների հետ,
- մասնագիտական տեղեկատվության ապահովում,
- ախտորոշման հնարավոր ելքերի ուղղությամբ խորհրդատվություն,

- երեխայի Ֆիզիկական կարողությունների զարգացում,
- լսողական ընկալման զարգացում,
- առարկայական գործունեություն վարելու կարողության զարգացում,
- հուզական ոլորտի զարգացում,
- խոսքային միջավայրի ապահովում:

Լսողության խանգարումներ ունեցող երեխային ցուցաբերվող վաղ օգնության աշխատանքներն իրականացվում են ստորև ներկայացված սխեմայով (նկ.1):

Հաշվի առնելով դիդարկվող խնդիրները՝ ներկայացրել ենք այն հիմնական ռազմավարությունը, որով պետք է առաջնորդվեն ծնողները լսողության խանգարումներն ախտորոշելուց անմիջապես հետո: Տեսագործական վերլուծությունները վկայում են, որ լսողության խանգարումների ախտորոշմանը պետք է հաջորդեն վերականգնողական աշխատանքները, որոնք իրականացվում են հետևյալ ուղղություններով՝

- լսողության վաղ պրոթեզավորում՝ համապատասխան սարքերով,
- անհատական պարապմունքների կազմակերպում սուրդոմանկավարժի հետ,
- լուսավորչական աշխատանքներ ծնողների հետ՝ լսողության խանգարումներ ունեցող երեխաների հետ իրականացվող վերականգնողական, լսողության և խոսքի զարգացման աշխատանքների բնույթին ծանոթացնելու նպատակով,
- երեխայի լսողախոսակցական գործառույթի զարգացման մա-



Նկար 1. Լսողության խանգարումներով երեխաների ընտանիքում իրակա- նացվող վաղ օգնության համագործակցային աշխատանքի սխեմա

կարգակի և ընդհանուր վիճակի գնահատում, որն իրականացնում են աուդիոլոգը և սուրբումանկավարժը՝ երեխայի լսողական սարքը 3-6 ամիս կրելուց հետո: Այսպես՝

- եթե լսողական սարքերով երեխայի լսողախոսակցական գործառույթի զարգացումը համապատասխանում է նորմայի չափորոշիչներին, ապա երեխան շարունակում է կրել լսողական սարքերը և հաճախել սուրբումանկավարժական պարապմունքներին:
- լսողական սարքերով երեխայի լսողախոսակցական գործառույթի զարգացումը չի համապատասխանում նորմայի չափորոշիչ-

ներին և ցուցված է խխունջային ներպատվաստում, ապա խորհուրդ է տրվում երեխային վիրահատել, քանի որ միակ միջոցը, որի շնորհիվ երեխան կարող է տիրապետել բանավոր խոսքին, խխունջային ներպատվաստումն է:

Այսպիսով, տեսագիտական և գործնական վերլուծությունները ցույց են տվել, որ լսողության խանգարումներ ունեցող երեխաների ընտանիքում վաղ օգնության հիմնահարցերը գիտահետազոտական լուրջ մարտահրավերներ են առաջադրում սուրբումանկավարժությանը, քանի որ սուրբումանկավարժական աշխատանքների բովանդակությունն ու տեխնոլոգիաներն այս տեսան-

կյունից բավարար ուսումնասիրված չեն: Հաշվի առնելով սույն հանգամանքը՝ կարծում ենք, որ մեր կողմից ներկայացված լսողության խանգարումներ ունեցող երեխաներին ցուցաբերվող վաղ օգնության ուղղությունները և ձևերը կնպաստեն սուրդոմանկավարժական աշ-

խատանքների արդյունավետության բարձրացմանը: Դրանք կնպաստեն մասնագետների և ծնողների իրազեկվածության մակարդակի բարձրամանը, կխթանեն վաղ օգնությունն ընտանիք ներդնելու և ծնող-մասնագետ համակործակցային փոխահարբերությունների ձևավորման կարևոր գործընթացները [1,3]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Андреев Л. Б. Сурдопедагогика. Москва, 2005.
2. Басова А.Г., Егоров С.Ф. История сурдопедагогика: Учеб. пособие. Москва, 1984.
3. Богданова Т. Г. Сурдопсихология, Москва, 2002.
4. Леонгард Э. И. Развитие речи детей с нарушениями слуха в семье: Ме-

- тодические рекомендации для родителей. Москва, 1985.
5. Пельымская Т.В. Выявление нарушений слуховой функции у детей 1-го и 2-го годов жизни (педагогический аспект) // Дефектология. Москва, 1987.
6. Янн П.А. Воспитание и обучение глухого ребенка: Сурдопедагогика как наука / Пер. с нем. Москва, 2003.

РЕЗЮМЕ

РАННЯЯ ПОМОЩЬ ДЕТЯМ С НАРУШЕНИЕМ СЛУХА В СЕМЬЕ

Л. А. Саратикян

доцент кафедры специальной педагогики и психологии Армянского государственного педагогического университета имени Хачатуря Абовяна, кандидат педагогических наук

Л. Н. Балабекян

логопед благотворительного фонда “Патмос-Арарат”

В статье представлена проблема оказания ранней помощи детям с нарушением слуха в семье, раскрывают-

ся основные задачи и направления построения этой работы.

SUMMARY

EARLY ASSISTANCE OF CHILDREN WITH HEARING IMPAIRMENTS IN THE FAMILIES

L. H. Saratikyan

Associate professor at the Chair of Special Pedagogy and Psychology, Khachatur Abovyan Armenian State Pedagogical University, Candidate of Pedagogical Sciences

L. N. Balabekyan

«Patmos-Ararat» charity foundation speech therapist

The problem of rendering the early assistance for children with a hearing impairment in a family is presented in

article and revealed the main objectives and the directions of this work.

**ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ
ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ**

Ա.Հ.Սվաջյան

Խաչատրուր Աբովյանի անվան հայկական պեդագոգական մանկավարժական համալսարանի հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու

Հանգուցային բառեր և արտահայտություններ. կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխա, հատուկ դպրոց, ներառական կրթություն իրականացնող դպրոց, գնահատում, եզրակացություն, անհատական ուսումնական պլան, դիտարկման քարտ:

Համաձայն «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ հանրակրթությունը ներառում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման և դաստիարակության համակարգը: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող /ԿԱՊԿՈՒ/ անձանց կրթության նպատակը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց իրենց ընդունակություններին և կարողություններին համապատասխան և առողջությանը համարժեք ուսումնական միջավայրում նրանց հասարակական հարմարեցման, ինքնասպասարկման հմտությունների ձևավորման, աշխատանքային, մասնագիտական գործունեության և ընտանե-

կան կյանքին պատրաստվածության ապահովումն է: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթադաստիարակչական գործընթացը կազմակերպելու նպատակով Հայաստանի հանրապետությունում գործում են հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններ (երկարօրյա և գիշերօթիկ ռեժիմով), որոնք իրականացնում են հանրակրթական և հատուկ հանրակրթական ծրագրեր:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող /ԿԱՊԿՈՒ/ անձանց կրթության գործընթացի արդյունավետ կազմակերպան համար մեծ նշանակություն ունի նաև ներառական կրթությունը, քանի որ այն ապահովում է ուսուցման նկատմամբ առավել ճկուն մոտեցում՝ բավարարելով երեխաների տարաբնույթ կրթական պահանջները:

Տասը տարուց ավելի է, ինչ Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է ներառական կրթություն: 2011-2015 թթ. կրթության զարգացման պետական ծրագրով

Նախատեսվում է բարեփոխումներ իրականացնել կրթական համակարգում՝ զարգացնելով ներառական կրթությունը հանրապետությունում: Այնուամենայնիվ, այսօր դեռևս կրթական համակարգում ներգրավվելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք և այլ դժվարություններ ունեցող երեխաները բախվում են լուրջ խնդիրների՝ պայմանավորված նրանց կրթության իրավունքով:

ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության կազմակերպման գործընթացի անքակտելի բաղադրիչ է հանդիսանում Բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնների կողմից կրթական կարիքների գնահատումը: Այն բարդ գործընթաց է, որն իրականացվում է մի քանի փուլերով՝ տեղեկատվության հավաքագրում, գնահատում, եզրակացություն: Այս փուլերից յուրաքանչյուրի կազմակերպման գործընթացն ունի որոշակի առանձնահատկություններ և դժվարություններ: Մեր կողմից կազմակերպվել է հետազոտություն, որի ընթացքում դիտարկվել և վերլուծվել է ուսումնական հաստատություններում՝ հատուկ և ներառական դպրոցներում իրականացվող գնահատման գործընթացը, դպրոցի և գնահատող մասնագետների համագործակցությունը:

Բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի կողմից իրականացվող գնահատման գործընթացում գնահատող մասնագետներին ներկայացվում են երեխայի անձնական գործում առկա մի շարք փաստաթղթեր, որոնց տվյալների հիման վրա կազմվում է

երեխայի կրթական կարիքի մասին վերջնական եզրակացություն: Գնահատման գործընթացում ուսումնասիրվում են տվյալ կրթական հաստատության կողմից ներկայացվող հետևյալ փաստաթղթերը՝

- բժշկական քարտ, որը ներկայացվում է երեխայի տեղամասային պոլիկլինիկայից կամ մանկական հոգեբանադաբանական ծառայությունից,
- դիտարկման քարտ, որը լրացվում է տվյալ հաստատության մանկավարժների կողմից,
- եթե երեխան նախկինում գնահատված է եղել գնահատման կենտրոնի կողմից, ապա ներկայացվում է նաև նախորդ գնահատման եզրակացությունը և արձանագրությունը,
- անհատական ուսումնական պլանը, ըստ որի՝ տվյալ ուսումնական հաստատությունում կազմվում և իրականացվում են երեխայի կրթության գործընթացն ու զարգացնող աշխատանքները:

Մեր կողմից կազմակերպված հետազոտությունները ցույց տվեցին, որ վերոնշյալ փաստաթղթերում տեղ գտած տեղեկատվությունը երբեմն լիարժեք չի տրամադրվում կամ այն վիճահարույց է լինում:

Երեխայի անձնական գործում առկա փաստաթղթերի շարքում հատուկ ուշադրության են արժանի բժշկական տեղեկանքները: Մի շարք դեպքերում դրանցում արված գրառումներն իրենց բովանդակությամբ անհասկանալի էին, ներկայացված էին անհասկանալի եզրույթներով: Բացի այդ, բժշկական փաստաթղթերում հաճախ ախտորոշումները տր-

ված էին շատ հին անվանումներով, որոնք այսօր չեն գործածվում, մինչդեռ այսօր ընդունված Հիվանդությունների միջազգային 10-րդ դասակարգման եզրույթները /որոնց վրա իր եզրակացությունները ներկայացնելիս հենվում է նաև գնահատման կենտրոնը /՝ բժշկական տեղեկանքներում հազվադեպ են հանդիպում:

Մենք բացահայտեցինք նաև, որ որոշ դեպքերում երեխայի բժշկական քարտում արված նշումները կամ բժշկական տեղեկանքում առկա ախտորոշումը չէին համապատասխանում իրականությանը /օրինակ, երեխայի բժշկական քարտում նշված էր ՄՈՒԿ ախտորոշումը, սակայն երեխան նման խնդիր չունեի/: Բժշկական տեղեկանքների տրամադրման ժամկետները երբեմն շատ հին էին: Օրինակ, եթե առաջին դասարանում մանկաբույժի կամ նյարդաբանի կողմից երեխայի մոտ ախտորոշվել է խոսքի ընդհանուր թերզարգացում, ապա յոթերորդ դասարանում, երբ զարգացման տվյալ խնդիրն այլևս չի նկատվում, ենթադրվում է, որ ախտորոշման հերքումը պետք է տեղ գտնի երեխայի բժշկական քարտում, այլապես թվում է, թե երեխայի խնդիրը շարունակում է ակտուալ մնալ մինչև տվյալ հետազոտությունը:

Հետազոտությունները միաժամանակ ցույց տվեցին, որ որոշ հատուկ դպրոցներում գրեթե բոլոր երեխաների բժշկական տեղեկանքները տրամադրվել էին մեկ բժշկի կողմից՝ առանց բժշկական հաստատության կնիքի, կասկածելի ձևաթղթի վրա /Հայկական ՍՍՀ լուսավորության մինիստրության

երեխայի հետազոտման ձևաթուղթ/, այնինչ գնահատման կենտրոնին կցված է մանկական հոգեբուժական դիսպանսերը, և ենթադրվում է, որ բժշկական փաստաթղթերը պետք է ներկայացվեին տվյալ կառույցի բժշիկների կողմից՝ ձևակերպելով գրագետ և ժամականակից եզրույթներով, ինչն էլ միայն կարող է հիմք հանդիսանալ հոգեբանամանկավարժական գնահատման համար:

Հետաքրքրական էր նաև դիտարկման քարտերում ներկայացված տեղեկատվությունը, որը լրացվում էր երեխայի հետ աշխատող մասնագետների կողմից՝ երեխային բնութագրելով ուսուցչի տեսանկյունով: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հիմնականում ուսուցիչները սխալ էին բնութագրում երեխաներին, հաճախ նշում էին այնպիսի խնդիրներ, օրինակ, խոսքի խանգարում կամ հենաշարժողական խանգարում /ընդ որում, յուրաքանչյուր դպրոցում արված էին տվյալ դպրոցի ուղղվածությանը համապատասխան նշումներ/, որոնք բուն գնահատման գործընթացի ժամանակ չէին դիտարկվել: Դիտարկման քարտում նշված «Ինչ եք ակնկալում գնահատումից» հարցին ուսուցիչները հիմնականում պատասխանել էին «անաչառ վերաբերմունք և ճիշտ գնահատում», հարց է ծագում՝ ինչու գնահատումը պետք է անկողմնակալ չլինի:

Եթե նախկինում տվյալ երեխան գնահատվել է Գնահատման կենտրոնի կողմից, ապա նրա անձնական գործում պետք է առկա լինեն նաև նախորդ գնահատման եզրակացությունները և արձանագրությունը,

սակայն այս գործընթացում նույնպես առկա էին մի շարք խնդիրներ: Մեր կողմից իրականացված ուսումնասիրությունները բացահայտեցին, որ մի շարք երեխաներ չունեին նախորդ գնահատման եզրակացություն և չէին անցել հոգեբանամանկավարժական գնահատում կամ խախտվել էր օրենքով սահմանված ժամանակակարգը /2 տարի/ : Օրինակ, հատուկ դպրոցներում կային երեխաներ, որոնց վկայագրումը կատարվել էր 2006թ-ին Արմենիա բժշկական կենտրոնի կողմից տրված տեղեկանքի հիման վրա. վերջին տարիներին երեխան չէր ներկայացվել գնահատման: Այս փաստը բավականին զարմանահարույց է, քանի որ անհասկանալի է, թե ինչպես է տվյալ երեխայի վկայագիրը համարվել վավեր փաստաթուղթ, որի հիման վրա դպրոցին տրվել էր համապատասխան ֆինանսավորում:

Գնահատման կենտրոնի կողմից տրված եզրակացության նմուշում նշվում է նաև երեխայի հետ աշխատելու համար առաջարկվող կրթական ծրագիրը, սակայն տպավորություն է ստեղծվում, որ այն հիմնականում մնում է թղթի վրա, քանի որ գերակշռող դեպքում այդ ծրագիրը փոխանցված չէր երեխայի անհատական ուսումնական պլան և այնտեղ նշված էր բոլորովին այլ ծրագիր: Օրինակ, եթե եզրակացության մեջ նշված է որ, երեխայի հետ անհրաժեշտ է աշխատել հանրակրթական չափորոշիչների և առարկայական ծրագրերի հիման վրա կազմված Անհատական ուսումնական պլանով / ԱՈՒՊ -ով/, ապա ԱՈՒՊ -ում նշված էր, որ երեխայի հետ աշխատում են թե-

թև մտավոր հետամնաց երեխաների համար նախատեսված ծրագրով և առարկայական չափորոշիչներով կամ՝ հակառակը: Մի շարք այլ դեպքերում, երբ գնահատման կենտրոնի կողմից առաջարկվել էր աշխատել Հանրակրթական չափորոշիչների և առարկայական ծրագրերի հիման վրա կազմված ԱՈՒՊ-ով, ուսուցիչները նշում են, որ հանրակրթական չափորոշիչների դեպքում ԱՈՒՊ-ներ չեն կազմվում: Կարծում ենք, որ գուցե գնահատման կենտրոնի կողմից առաջարկված կրթական ծրագրերի հարցում ուսուցիչների անհետևողականության դրսևորումն է այն պատճառներից մեկը, որի հետևանքով հատուկ դպրոցում սովորող երեխաների զարգացման գործընթացում երբեմն դիտվում է հետընթաց, այլ ոչ է առաջընթաց:

Գնահատման կենտրոնի աշխատակիցների կողմից ուսումնասիրվում էր նախորդ գնահատման եզրակացությունը և համադրվում ներկայիս կրթական կարիքը նախորդի հետ, սակայն զարմանալի է, որ այս գործընթացում ոչ մի անդրադարձ չէր կատարվում, թե ինչու է երեխայի կրթական կարիքն ավելի բարդացել, հակառակ գործընթացն ունենալու փոխարեն: Օրինակ, եթե նախորդ անգամ արձանագրվել է երեխայի ուսումնական ունակությունների յուրահատուկ խանգարում կրթական կարիք, ապա հասկանալի չէ, թե ինչու է 2-3 տարի անց գնահատվում թեթև աստիճանի մտավոր հետամնացություն: Հարց է ծագում. ինչ է արել հատուկ դպրոցը, ինչպե՞ս է աշխատել, որ շտկվելու փոխարեն խնդիրը գնալով խորացել է:

Նախորդ եզրակացության հետ համադրումը գնահատման գործընթացի վրա երբեմն ունենում էր նաև իր բացասական ազդեցությունը, քանի որ երբեմն գնահատողը երեխայից կարծես թե արդեն ակնկալում էր այն մակարդակի պատասխաններ, որոնք նշված էին նախորդ եզրակացության մեջ: Հանգամանք, որն իր ուղղակի անդրադանձն էր ունենում նոր եզրակացության մեջ նշված երեխայի կրթական կարիքի սահմանման վրա:

Նմանատիպ խնդիրներ դիտվում էին նաև ԿԱՊԿՈՒ երեխաների ԱՌԻՊ-ների ուսումնասիրության ժամանակ, որոնք նույնպես հաճախ արտացոլում են տվյալ երեխայի հետ

իրականացվող աշխատանքների որակը և կազմակերպման մեթոդիկան:

Ամփոփելով հետազոտության արդյունքները՝ կարող ենք փաստել, որ հատուկ կամ ներառական կրթություն իրականացնող հանրակրթական դպրոցներում հանդիպում են մի շարք խնդիրներ, որոնց լուծումը հնարավորություն կտա ոչ միայն առավել արդյունավետորեն հայտնաբերել և ճանաչել ԿԱՊԿՈՒ երեխաների կրթական կարիքները, այլև նպատակասլաց դարձնել կրթական գործընթացը և զարգացնող-վերականգնողական աշխատանքները:

РЕЗЮМЕ

ОРГАНИЗАЦИЯ ШКОЛЬНОГО ОБУЧЕНИЯ ДЕТЕЙ С ОСОБЫМИ ОБРАЗОВАТЕЛЬНЫМИ ПОТРЕБНОСТЯМИ В РА

А.О.Сваджян

доцент кафедры специальной педагогики и психологии Армянского государственного педагогического университета имнеи Хачатура Абовяна, кандидат педагогических наук

В статье представлена проблема организации школьного обучения детей с

особыми образовательными потребностями в республике Армения.

SUMMARY
**ORGANIZATION OF SCHOOL STUDY FOR CHILDREN WITH SPECIAL EDUCATIONAL
NEEDS IN RA**

A.H. Svajyan

Associate professor at the Chair of Special Pedagogy and Psychology Khachatur Abovyan Armenian State Pedagogical University, Candidate of Pedagogical Sciences

In the article introduced the problem of the organization of school education for children with special educational needs in the Republic of Armenia.

ПРИНЦИПЫ ДЕОНТОЛОГИИ В ВОССТАНОВЛЕНИИ РЕЧИ ПРИ АФАЗИИ

А.М. Адамян

Московский Центр патологии речи и нейрореабилитации, логопед высшей категории

Ключевые слова и выражения: медицинская и педагогическая деонтология, афазия, личностные характеристики специалиста, восстановление речи, профессиональная этика, логопед, лечебная педагогика.

“Светя другим, сгораю сам”

В процессе работы по восстановлению речи при афазии большое значение приобретает вопрос взаимоотношений между логопедом и больным, страдающим афазией. От качества и особенностей этих отношений во многом зависит результат лечения и восстановления речи.

В данной работе мы задались целью охарактеризовать возможности медицинской деонтологии в сфере логопедии.

Медицинская деонтология (греч. Deontos–должное, надлежащее) – наука о профессиональном поведении медицинского работника. Сам термин “деонтология” был введен в обиход в начале 19-го века английским философом Иеремией Бентамом (1748-1832) для обозначения науки о профессиональном поведении человека. Понятие “деонтология” в равной мере применимо к любой сфере профессиональной деятельности: медицинской, педа-

гогической, юридической, инженерной и т.д. [7].

Деонтология особенно важна в тех разделах профессиональной деятельности, которые широко используют формы сложных межличностных взаимодействий и ответственных взаимодействий. К ним в первую очередь относится современная медицина, где существенную роль играют разнообразные формы психологического влияния медицинских работников на больного, а также педагогика, где воспитание и обучение построены на непосредственном влиянии воспитателя-педагога на обучающегося [4].

Профессиональная этика наделена рядом особенностей, как общих, так и частных. Одна из них касается неравенства сторон в сфере взаимодействия сторон. Именно это неравенство ведет за собой создание профессиональной деонтологии, вырабатывающей этические кодексы, нормы и правила поведения специалиста. Так, например, педагогическая деонтология разрабатывает правила и нормы поведения педагога в сфере его профессиональной деятельности [5, 2].

Отражение нормативных требований, профессиональных норм в со-

знании позволяет педагогу полнее и адекватнее воспринимать педагогическую деятельность, ориентироваться в ней, вырабатывать стратегию и тактику, планы и цели профессиональной деятельности, сознательно регулировать свое поведение. Эти правила и нормы являются и условием, и продуктом, и средством познания педагогической деятельности.

Как особое учение в научной и практической медицине деонтология подразделяется на общую, изучающую общие медико-деонтологические принципы, и частную, изучающую деонтологические проблемы в разрезе отдельных медицинских специальностей.

В этом плане все постулаты общей и частной медицинской деонтологии, по нашему мнению, в равной мере можно отнести и к области патологии речи, при которой проводится лечебная педагогическая помощь. "Лечить больного, а не болезнь" – таково традиционное требование медицины. Огромную роль в успешном лечении играют взаимоотношения врача и больного – такт, обоюдное доверие, любовь к человеку, нередко и самоотверженность, проникновение в сокровенные переживания и чаяния страдающего человека. Успех лечения определяется способностью врача найти ключ к сердцу больного [6].

В логопедии логопед, как и врач должен организовать свои отношения с человеком, у которого имеются речевые нарушения, и с его близкими, и с коллегами по работе.

Перед врачом/логопедом ставится задача психологической реадapta-

ции и обучения больного, включая мобилизацию у пациентов механизмов "преодоления болезни", использованию принципов, подходов и мероприятий, направленных на повышение "качества жизни" хронических больных, обеспечение пациентов и членов их семей минимально необходимым объемом медицинских знаний, умений и навыков, формированию у больных личной ответственности за состояние собственного здоровья.

При хронических заболеваниях уровень "качества жизни" является одним из ведущих критериев эффективности проводимой восстановительной терапии и приспособления человека к новым, видоизмененным условиям его жизнедеятельности в семье и в социуме в целом [8].

Люди хотят, чтобы врач/логопед объяснил им на понятном языке, какой болезнью они страдают, насколько она серьезна и что они должны делать, чтобы избавиться от нее. Поскольку половину сказанного забывают даже здоровые люди, врачи/логопеды должны тщательно определять объем, сложность и своевременность сообщаемой информации.

Намного сложнее обстоит дело при афазиях, когда логопед часто не может понять больного, и в то же время больной не понимает обращенный к нему вопрос. При работе с такими больными требуется большое терпение, наблюдательность и чуткость. Однако иногда, даже несмотря на выполнение всех принципов личностных отношений между врачом/логопедом и пациентом, можно наблюдать некоторое неверие в специалиста и назначен-

ные им методы восстановительной терапии. Такие сложности связаны чаще всего с наличием ятрогенных состояний в анамнезе, либо личным отношением больного к медицине. В таких ситуациях врач/логопед в первую очередь обязан поставить в известность заведующего отделением или руководителя клиники с тем, чтобы при проведении обходов больной получил исчерпывающую информацию о своем состоянии и лечении из их уст [1].

Пациент в настоящее время имеет право выбора врача и логопеда в соответствии с собственными мотивами и ценностями. Врач/логопед же ограничен в своем выборе пациента и должен быть подготовлен к общению с любым человеком.

Личность больного, как и любого другого человека, характеризуется группой качеств: темпераментом, способностями, интеллектом, характером и пр. Многие из этих характеристик приходится учитывать для формирования эффективного контакта с больным. Одна из таких особенностей личности – это соотношение в ней качеств экстраверсии и интроверсии. Общение с больными-экстравертами целесообразно начинать с формирования эмоционального контакта, а установив его, переходить к информационному. Контакт же с больными-интровертами труден, его лучше начинать с нейтрального, информационного.

Большое значение для установления эффективного контакта имеет знание врачом/логопедом характерологических особенностей больного, особенно наличие стойкого чрезмерного

усиления каких-либо отдельных черт характера. В повседневной жизни акцентированные черты могут играть двоякую роль в социальной адаптации: они одновременно усиливают личностную устойчивость к одним неблагоприятным воздействиям и ослабляют ее к другим. При психотравмирующих ситуациях такая избирательная уязвимость может облегченно приводить к личностной декомпенсации и невротическому состоянию.

Практически любая встреча и беседа врача/логопеда с больным, даже если она предпринимается только с диагностической целью, имеет важное значение для установления и поддержания оптимального психологического контакта. Особенно важно профессионально грамотно и умело провести с больным первую встречу и беседу, с которой и начинается лечебный процесс. Это очень важный психотерапевтический фактор. Больной должен увидеть внимательное отношение к себе и искреннее желание помочь ему, а врач/логопед должен суметь выяснить, что для больного является самым важным. В каждом конкретном случае установление психологического контакта зависит от опыта врача/логопеда и состояния больного.

“Нет ничего приятнее для человека, чем звук его собственного имени”, отмечал Д.Карнеги [3]. Поэтому еще до первой встречи с больным целесообразно знать полное его имя, так как пациенту всегда будет импонировать такая информированность врача/логопеда. Поскольку контакт с пациентом имеет две стороны: информационную и эмоциональную, то беседу с больным

хорошо бы начать тоном, которым мы говорим со старыми знакомыми.

Больные, предпочитающие эмоциональный контакт, ищут в первую очередь сочувствия, человечности и никогда не простят отношения к себе, как к “материалу”. Информацию такие больные воспринимают без сопротивления только от эмоционально-приятного собеседника. У больных, предпочитающих информационный контакт, авторитетом и уважением пользуется лишь врач/логопед, показавший свои деловые качества. Таким образом, обе стороны контакта являются необходимыми для успешного лечения, но очередность информирования врача/логопеда разная с разными больными.

Врач/логопед, конечно, должен сам сочувственно отнестись к больному, прежде чем высказывать ему свое мнение. Уже первый час консультации может наладить или испортить все будущие взаимоотношения и сделать легким или трудным обоснование правильного диагноза и надлежащего лечения. В выполнении этого нужно уметь найти золотую середину между обдуманной строго объективной манерой и сентиментальной преувеличенной заботливостью, хотя о каждом больном следует составить суждение и определить лечение, согласно его индивидуальным особенностям.

Следует выяснить, каков уровень знаний больного и каково понимание им своего состояния здоровья? В какой мере он осведомлен об этом другими специалистами или членами своей семьи и друзьями? И многое ли из того, что ему сказано, соответствует истине

и многому ли он верит? Наиболее трудно завоевать доверие больного, который сам является врачом и который уже с самого начала представляет себе наилучшие возможности.

Следует принять во внимание семью и друзей больного. Каково их отношение к больному и к его болезни? Желательно получить сведения об этом непосредственно как от них, так и от самого больного. Хроническому больному, в силу психо-социальных последствий его функциональных ограничений (реакция семьи, уменьшение социальной сферы активности, ущерб профессиональной работоспособности и т.д.) грозит превращение в “неполноценного”, в инвалида. И в противодействие хроническому заболеванию проявляются две стратегии поведения – пассивная и активная.

Больной должен осознать общее изменение жизненной обстановки и попытаться активно преодолеть препятствия с помощью нового, приспособленного к заболеванию образа жизни. Однако требование “жить вместе с болезнью” соблюдать трудно, и это приводит к тому, что многие люди реагируют на изменения своего функционирования, вызванного болезнью, такими психопатологическими расстройствами, как страх, апатия, депрессия и др.

К пассивному поведению относятся защитные механизмы: реакции преуменьшения серьезности болезни типа игнорирования, самообмана, рационализации или сверхконтроля. Однако ценность этих пассивных попыток преодоления психологических и социальных последствий при длительной бо-

лезни часто сомнительна. Более значимыми являются, конечно, активные усилия пациента по решению возникших перед ним проблем, связанных с болезнью.

Поскольку профессиональная деятельность врача/логопеда связана с больным человеком, чрезвычайная сложность которого определяется не только особенностями его общественно опосредованных биологических систем, составляющих живой организм, но главным образом многообразием общественных связей, специальных зависимостей (в семье, в учебном заведении, на производстве, в жизни общественных организаций, в коллективе друзей и т.д.), которые собственно и формируют неповторимый психологический облик, индивидуальность человека. В отличие от здорового человека личность больного изменяется и дополняется теми особенностями, которые привносит в нее болезнь.

Врач/логопед постоянно должен помнить о том, что любое соматическое заболевание, а тем более затянувшееся на длительный срок, приковывающее больного к постели, вызывающее нарушение речи, не может не вызвать реакцию со стороны психики. Устранение состояния эмоционального угнетения, чувства безнадежности, неверия в выздоровление столь же необходимо, как и устранение основной причины соматического страдания. В этом смысле психотерапия является один из важнейших методов, которым неизменно должен пользоваться врач/логопед не только на протяжении пребывания больного в условиях стационара, но и при выписке из

него. Другими словами, в течение всего периода болезни метод убеждения дает возможность врачу/логопеду активно воздействовать на психику человека. Главным общим принципом в лечении и подходе к больному является принцип щажения его психики. Контакт с психотерапевтом на протяжении всего периода лечения становится неотъемлемой частицей жизни больного и оставляет в его сознании глубокий след [9].

Беседы врача/логопеда мобилизуют стремление больного на скорейшее выздоровление, преодоление того или иного тягостного синдрома болезни, помогают справиться с излишними опасениями за исход болезни, мешающими быстрому улучшению самочувствия. В беседе врача/логопеда с больным огромное значение имеет все, вплоть до тембра голоса, интонаций. Поэтому при обсуждении данной темы хочется еще раз подчеркнуть значение профессиональной и личностной характеристики логопеда.

Отношение логопеда к больному зависит не только от деонтологических принципов, существующих в медицинской и педагогической науках, но и от объема профессиональных знаний, личной активности, самостоятельности, склада ума, психологической пластичности, логики, а также от врожденных качеств, заложенных и развитых в нем, в частности, воспитанности, интеллигентности, доброжелательности, чувства долга и др. Общаюсь с больным, необходимо временно забыть о существующих проблемах в коллективе, семье и т. д. с тем, чтобы больной чувствовал, что для специали-

ста на момент проведения лечения он находится на первом месте.

Таким образом, исходя из вышеизложенных параллелей (врач/логопед), можно сделать вывод, что вопросы деонтологии при работе по восстановлению речи включают в себя множество элементов медицинской деонтологии. Кроме того, логопед часто является последним специалистом, с которым пациент общается после получения травмы или заболевания. В это время окончательно формируется мнение больного о логопедике, о враче и медицине в целом, поэтому полное и неукоснительное соблюдение всех принципов деонтологии, внедрение в лечение лечебной педагогики и психической реабилитации позволяет не только вернуть прежний облик пациента, веру в себя и свои силы, но и способствовать его интеграции в социум.

В деонтологию лечебной педагогики должно входить не только выполнение этических требований и правил поведения, но и выработка деонтологического сознания, осмысления с деонтологических позиций профессиональных знаний, отношений между людьми, а также формирования личностных качеств в соответствии с профессиональными принципами логопеда.

Проведенный обзор указывает на важность выработки ориентиров и принципов профессионального поведения логопеда. Изучение этических аспектов и личностных механизмов, обеспечивающих морально-нравственное функционирование личности специалиста –логопеда в процессе своей профессиональной деятельности будет способствовать решению проблем, возникающих в деле восстановления речи.

ЛИТЕРАТУРА

1. Гребенюк А.М., Ивашутин Д.А. Деонтология в реабилитации пациентов. Травма, 2008, том 9, №2, с. 16.
2. Ермолович М.М. Педагогическая деонтология в образовательном пространстве, 2007. www.bsu.by.pdf 173233.
3. Карнеги Д. Как завоевать друзей и оказывать влияние на людей, 1966, 93 с.
4. Лакосина Н.Д., Ушаков Г.К. Медицинская психология. Москва, Медицина, 1984, с. 71–80.
5. Левитан К.М. Основы педагогической деонтологии. Москва, 1994, 192 с.
6. Лихтенштейн В.И. Помнить о больном, Киев, Изд-во “Вища школа”, 1978, 173 с.
7. Матвеев В.Ф. Основы медицинской психологии, этики и деонтологии. Москва, Медицина, 1984, с. 95–120.
8. Секоян И.Э. Психологическая ре-адаптация и обучение больных, Ереван, 2003, с. 13–15.
9. Тарнавский Ю.Б. Срыва можно избежать, Москва, Медицина, 1990, с. 86.

ԱՄՓՈՓՈՒՄ
ԽՈՍՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԴԵՈՆՏՈԼՈԳԻԱՅԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ
ԱՖԱԶԻԱՅԻ ԺԱՄԱՆԱԿ

Ա.Մ.Ադամյան

*Մոսկվայի նյարդավերականգնողական և խոսքի պաթոլոգիայի կենտրոնի
բարձրագույն կարգի լոգոպեդ*

Հոդվածում քննարկվում է բժշկական դեոնտոլոգիայի սկզբունքների կիրառման նպատակահարմարությունը լոգոպեդիայի ասպարեզում: Աֆազիայի դեպքում խոսքի վերականգնման գործընթացում մեծ նշանակություն է ստանում լոգոպեդի և հիվանդի միջև առաջացած փոխհարաբերությունների հարցը: Այդ

փոխհարաբերությունների որակից և առանձնահատկություններից է մեծապես կախված բուժման արդյունքը և խոսքի վերականգնումը: Կարևոր նշանակություն ունեն ոչ միայն հիվանդի յուրահատկությունները, այլ նաև լոգոպեդի մասնագիտական և անձնային բնութագրերը:

SUMMARY

THE PRINCIPLES OF MEDICAL DEONTOLOGY IN RECOVERY OF THE SPEECH IN CASE OF APHASIA

A.M. Adamyan

*Center of pathology of the speech and neurorehabilitation,
Highest category speech therapist, Moscow*

It is believed in this paper that the basic principles of medical deontology are advisable in field of logopaedics. During speech therapy in case of aphasia the most significant attention is paid to the problem of relations between logopaed with patients. Results of treatment and

restoration of speech disorders will mainly depend on quality and peculiarities of that relations. It gains in ponderable importance not only patients features, but also professional skills and proper behavior of a speech therapist towards his patient.

ВОЗРАСТНЫЕ ИЗМЕНЕНИЯ ПОДВИЖНОСТИ ПОЗВОНОЧНИКА ШКОЛЬНИКОВ: ЛОНГИТЮДНЫЙ АСПЕКТ

Е.С. Акопян

*доцент кафедры теории и методики физического воспитания
Армянского государственного института физической культуры, кандидат педагогических наук*

Ключевые слова и выражения: позвоночник, школьники, дети с нарушением опорно-двигательного аппарата, лонгитюдный аспект, лонгитюдные наблюдения.

Многочисленные исследования, посвященные состоянию опорно-двигательного аппарата детей школьного возраста, свидетельствуют о том, что с годами эта проблема не теряет своей актуальности и значимости. Данные медицинских осмотров свидетельствуют, что за период обучения в школе состояние детей ухудшается в 4–5 раз. Наиболее же предостерегающей является группа детей с нарушением опорно-двигательного аппарата [7,8,9]. По данным клинко-диагностического обследования, среди выпускников 9–11-х классов только 8% признаны здоровыми, число имеющих различные функциональные нарушения и заболевания позвоночника увеличивается до 67% [4,7]. Согласно данным литературы, 96% из всех отклонений от нормальной осанки у детей школьного возраста связано с дисфункцией и патологическими процессами, происходящими в скелетной

мускулатуре, и только 4% приходится на долю врожденных сколиоза и кифоза [9].

Нарушения осанки чаще всего формируются, как это следует из литературных источников, у детей с ослабленным здоровьем [12]. По данным разных авторов, у большинства слабовидящих детей наблюдается нарушение осанки, искривление позвоночника, плоскостопие. Выявлено, что нарушения осанки у слабовидящих находятся в пределах от 40 до 80 % случаев [5,10].

Դ.Ա.Հալոբրյա՛ն,Ա.Լ.Հալոբրյա՛ն [1] исследовали осанку детей со слабой умственной отсталостью. Среди 60% исследуемых умственно отсталых детей были выявлены нарушения осанки и плоскостопие.

Поэтому функциональное состояние позвоночного столба рассматривается не только как один из факторов, характеризующих определенное положение тела в пространстве, но и как наиболее существенный показатель состояния здоровья человека [6]; относится к числу наиболее актуальных медицинских и социально-педагогических проблем и находится в центре внима-

ния различных специалистов: врачей, гигиенистов, преподавателей физического воспитания.

